



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

UGRGR

463

12  
56



2



ՊՈԲԵԼԻՈՍԻ ՎԵՐԳԻԼԵԱՅ ՄԱՐՈՒԻ

ՀԱՎՈՒՑԿԱՆՔ

ՍԵՐԵ

15 JUN 2006

463

Պ.ՎԻՐԳԻԼԵԱՅՄԱՐՈՒՄ

ՀՈՎՈՒԱԿԱՆՔ

Թ.Ա.Ր.Գ.Մ.ԱՆ.Ե.Ա.Լ.  
ակ.

ՏԵ. ԵԴՈՒԱՐԴԱՅ ՀԻՒՐՄԻՒԶ.

ՇԻՐԱԿԱՅ Մ.ՐԲԵՊԻՍԱՆՊՈՍԻ

662



ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

1870

2009 JUL 21.



(3759)  
41

463-2009

հթ465



Յերգս յայսոսիկ Վիրդիլ  
կալաւ իւր օրինակ զթէոկրիտ  
քերթող սիրակուսացի . և կո-  
չեաց զսոսա ծաղկաքաղս, զի՞ ի  
բազմաց անտի յօրինելոց յիւր-  
մէ հովուական երգոց հատըն-  
տիրս եթող յետնոց , կամ զի  
զընտիր ընտիրս յերգոցն թէո-  
կրիտեայ նմանողօրէն ծաղ-  
կաքաղ արտար՚ի սոսին : ի հա-  
սակի քսանեինն ամաց սկը-  
սաւ Վիրդիլ յօրինել զտաղքս,  
զերեամ մի՞ սոսին երկասի-  
րեալ :

Ոմանք 'ի քննաբանից չարա-  
չար խմացան զափրելութիւնս ,  
զորս Վիրդիլ մուծանէ 'ի սո-  
սին : Եթէ ոչ յայտ էր այլուստ  
պարկեշտութիւն քերթողիս ,  
թերևս գոյր տեղի ձախողակի  
կարծեաց նոցա . զի և զտար-  
փանս ինչ եթէ ըստ օրինակին  
թէոկրիտեայ 'ի ներքս ածէ ,  
այնու համեստական կերպա-  
րանօք բանից զայնոսիկ բա-  
ցատրէ , զի ոչ ածէ տաղտկանո  
պարկեշտլսելեաց , մանաւանդ  
որոց չիցենն անտեղեակ հե-  
թանոսական օրինաց և սովո-  
րութեանց :

Օգուտ մեծ , մանաւանդ թէ  
կարեռութիւն 'ի կրթանս բա-  
նասիրականին ախորժակաց ,  
պահանջէր յեղուլ և զայսոսիկ  
'ի մերս բարբառ՝ առ 'ի լրումն  
երկասիրութեանց քերթողիս .  
քանդի փափկութիւն երև-


կայութեան , կենդանատիպ  
սլատկերք բնութեան , ամենա-  
գեղ բացատրութիւնք , ճշդու-  
թիւն ոճոյ՝ ոչ աւելի և ոչ  
նուազարկանելոյ բառս 'ի կիր ,  
կարգաբանութիւն և 'ի խանդս  
իսկ մտաց , և գիւտք անբրո-  
նազբօսք , այս ամենայն տեսա-  
նին 'ի գերագոյն օրինակս յայ-  
սոսիկ հովուերգակ տաղից :

---

ՀՈՎՈՒՄԿԱՆԱՑՆ

Պ · ՎԻՐԳԻԼԵԱՅ ՄԱՐՈՆԻ

ՇԱՂԿԱՔԱԴ ԱՌԱՋԻՆ



Տ Ի Տ Ի Բ Ո Ս

Ի բաշխել Ոկտաւիանոսի կայսեր զանցաստանս կրեմոնայ և Մանտուայ հինաւուրց զօրականին ի մրցանակ, կորոյս ընդայլս և Վիրգիլ մանտուացի զածու իւր փոքրիկ: Բայց ընծայականաւ Ասինեայ Պուլիոնի՝ որ յայնժամ ջոկատիւ փորուի դաւառի անդ դեղերէր՝ յանձնեալ Մեկենասայ, եւ ի ձեռն նորա գտեալ շնորհս առաջի կայսեր, ստացաւ զոր կորուսեալն էր: Ասսն որպէս զգովութիւնս Ոկտաւիանոսի եւ զՀռովմայ, զբախտ իւր եւ զաղէտս մանտուացւոց յերգս յայս նուագէ Վիրգիլ Տիտիբեայ զիւրն ի ամա բերելով զդէմս, եւ Մելիրէի զմանտուացւոցն:

ՄԵԼԻԲԵՈՍ ԵՒ ՏԻՏԻԲՈՍ

ՄԵԼԻՐԵԿԱ

Տիտիբէ, դու ընդ յարկաւ լսյնաւարած բազմեալ վիճւոյդ,  
Ըզմուսայդ վայրենի ի նուրբ եղէքն եղանակես.

Ըզհայրենի մեք ըզսահման թողաք  
եւ զանդըսցանկալիս,  
Մեք՝ փախըստականքի հայրենեաց,  
դու Տիտիբէ՝  
Հանդուցեալ ընդ հովանեաւ՝ ըզգեզանւոյն Ամարիլլեայ  
Ծառոց անտառիդ ուսուցանես կըք  
կնել զանուն։ 6

Տիտիրոս

Աստուած, Մելիբէ, ետ մեզ զանարը զայս կենցաղ, 7  
Զի ինձ միշտ լիցինա ինքն աստուած,  
եւ ստէսլ ամիկ մատաղ  
Ըզնորայն թացցէ բաղին ի փարանէ աստի մերմէ.

Նա խմոցս այսոցիկ թոյլ արջառոց  
ետ թափառել,  
Եւ գեղջուկ եղեգամբ զոր ինչ կա-  
միմը նըւագել:

### Մելիքենս

Ոչ խանդամ ընդ բաղդ քոյին, նա  
աւանիկ զարմանք են ինձ:  
Ուր այսքան յուղի ազմուկ ընդ ար-  
տորեքս առ հասարակ.  
Զայծերամն ահա ընդ իս ածեմ  
տըխուր ճեպով ի բաց.  
Եւ զայս իսկ, Տիտիրէ, հազիւ բե-  
րեմ մազապուր այծ,  
Որ այժմիկ լուծեալ զերկունս՝ ե-  
թող, աւաղ, ի մերկ ժայռին  
Երկուորեակս ի յոյս հօտին ընդ  
աշնկախիտ արքակաղնեօք:  
Զաղէտը զայսոսիկ, եթէ չէին մեղ  
միաք ահեակ,  
Յիշեմ զի դուժեցին յաճախ կաղնիք  
ամալահարեալք,  
Եւ ստէալ ի փալարեալ սղուոյն  
ձախող գուժեաց ագռաւ.

Այլ ասա մեզ, Տիտիրէ, ո՞ր առ-  
տուածն այն քո իցէ:

### Տիտիրոս

Ըզքաղաքըն զայն որ Հռովմ' յոր-  
ջորջի, ով Մելիքէէ,  
Անմիտըս կարծէի մերումս այսմիկ  
հանգունատիալ,  
Յոր հովիւքս ըզլաշանց մատաղ եր-  
կունս ածեմք յաճախս.  
Երբ ըզգամիու առ ըսկունդ, իբր  
ուլս առ մարսըն գիտէի,  
Երբ ըզջոջ ընդ մանունց սովոր եի  
համեմատել.  
Այլ այնչափ ի մէջ այլոց նա քաղա-  
քաց զլուխս ամբառնայ,  
Որչափ նոճք՝ ի մէջ ճամպուկ ուռեաց  
սովոր են ամբառնալ:

### Մելիքենս

Եւ ուսաի այդքան քեզ հարկ հա-  
սեալ ըզչուով տեսանելոյ:

Տիտիրոս

Յըղձից աղատութեան, այն որ թէ-  
պէտ եւ անագան,  
Սակայն հաշտ ի պարապորդս յիս  
ակնարկեաց, մինչ ըսպիտակք 51  
ի վերալ մօրուացըս վաղ կըտուբք  
ի վայր անկանէին.  
Սակայն հաշտ յիս ակնարկեաց, հաս  
պարագայց նա զհետ ամաց,  
Մինչ եթող Գալատէ, և զմեղ ունի  
Ամարիլիս.  
Զի ցորչափ գրաւեալ ունէր զիս  
Գալատէ, ոչ խակ ժըխտեմ,  
Ոչ ինձ յոյս աղատութեան, ոչ  
պախրէից էին խընամք. 56  
Թէ եւ շատք ի մերմէ զոհք ի բակէ  
ելանէին,  
Եւ մակարդէր պանիր պարարտ  
վասն աղաշնորհըն քաղաքի,  
Ոչ աջ ծանրաբեռն ինձ պըղնձեօք  
ի տուն դառնայր:

Մելիքես

Զարմանայի, Ամարիլիսէակ, հիմ  
կարդայիթ տըխուը առ դիս,  
Ում ըզմիրգըս կախեալ զիւրեանց  
կողերցըն թողութիր.  
Զի ի բաց կայր Տիտիր: Ըզքեղ շո-  
ճիքս խակ, Տիտիրէ,  
Ծառքս խակ ըզքեղ, և զքեղ աղ-  
բէրքս խակ այսոքիկ հրաւիրէին:

Տիտիրոս

Եւ զինչ, Մելիքէէ, առնելէր ինձ.  
չէր խակ հընար  
Այլազգ ինձ մերկանալ յանձնէ ի  
բաց զըտրըկութիւն,  
Եւ ոչ հաշտս ընդ իս այլուր գտա-  
նէլ երբէք ուրբէք ըզգիս.  
Անդանօք ըզովատանեակըն զայն ե-  
զէւ ինձ տեսանել,  
Ում բագինքս ամի ամի կըրկին վե-  
ցեակ ծըխեն աւուրս.  
Անդանօք նախ քանի զաղերս ասաց  
նա ցիս. Արածեցէք,

Սահմանի, զնախիր որպէս յառաջ,  
եւ զեղնամոլըն լլծեցէք:

### Մելիրկոս

Ծերունիդ բարեբաստիկ, մնացեն  
տալա քեզ անդք քոյին,  
Եւ նորին լայնալիք, թէպէտ եւ  
մերկ ապառաժուտք  
Եւ ի կնիւն տըլմաթաթաւ զարօ-  
տը շուրջ ծածկեսցէ լիճ.  
Մի ի Ճարակ անընդել տուժեսցի  
խաշնըն սազմնառիկ,  
Եւ մի ժանտք գրացւոյ հօտին վա-  
րակեսցեն ըզնա ախտածք:  
Ծերունիդ բարեբաստիկ, դու ասա  
ի մէջ ծանօթ գետոց, 56  
Դու ի մէջ սուրբ աղբերաց վայե-  
լսցես զով հովանի.  
Աստի ցանկ սահմանակից, ուրանոր  
շուրջ Ճարակաւոր 58  
Ի ծաղկունս ուռեստանին պարեն  
յաւէրժ հիրեւան մեղուք,  
Ըզքեզ մեզմ ի բըզզիւն յորդորեսցէ  
յահախ ի նիրհ.


Երգս անտի տերեւաքաղն արկցէ  
հողմոց բարձր ընդ ժայռիւ:  
Ոչ կերկերեալք, զորըս ինհամես,  
յայնժամ վայրի աղաւնիք.  
Ոչ տատրակն իսկ լրուեսցէ ի յերկ-  
նաբերձ բարտւոյն հեծել:

### Տիտիրոս

Եղթերուք ապա թեթեւք Ճարակես-  
ցին նախ ընդ եթեր,  
Մերկըս ծովք ըզձըկունս արկցէն  
յեզերս արտակիտեալ,  
Եւ ի բնիկ սահմանաց մալորականիք՝  
Պարթեւըն նախ  
Զնլարիս արբցէ նըժդեհ, եւ ըզմի-  
գրիս Գերմանիա, 67  
Բան թէ բնաւ ի սըրտէս մերմէ նո-  
րոյն սահեսցին գէմք:

### Մելիրկոս

Իսկ մէք ի ծարաւուռն աստի դհաս-  
ցուք կէսք յԱփրիկէ,  
Այլք ի Սկիւթըս տաբագէմք եւ ի  
սրընթաց կրետեանն Ռվաքս, 70



Կամ՝ ի բնաւ ախեղերաց տարաշ  
խարհիկն՝ ի բրիտանէ: 71  
Ոչ իսկ յետ երկայն ամաց լիցի  
զատհմանս ինձ հայրենիս,  
Եւ ոչ զաղքատին հիւղիս գըմբէթ  
սիզակուտակ  
Յետ հընձոց ինչ տեսանել, զիմսկե  
տութիւն, և զարմանաւ:  
Զանդաստանըս զայսոսիկ ըզմըշա-  
կեալս ի մէնջ այսպէս  
Զօրականնըն ժանա կացի, խո՞ւժըն  
զորայքըս զայսոսիկ.  
Ահա ուր հերձուած ըզհէք քաղա-  
քացիս զառածեցոյց,  
Ահա ոյց ոմանց ի հունձըս զարտո-  
րայս սերմանեցաք:  
Պատկինեա արդ ըզտանձի, Մելի-  
քէէ, արկ զորթո ի կարգ: 79  
Երթայք, ով գեղանըսիհ երբեմն իմ  
հօտ, երթայք՝ իմ ուլք.  
Ոչ եւս ընկողմանեալ դաշտագեղ  
ի քարայրի,  
Տեսից ըզձեղ ի հեռուստ ըզմացա-  
ռուտ կախեալ ժայռէ.  
Ոչ երգս արկից ի մըրմաննջ, ոչ եւս  
յինէն դուք արածեալք

Ըզծաղկաւէտ, այծք, ըզսինձ Զար-  
տակիցիք եւ զդասն ուսի: 84

### Տիտիրոս


Այլ դու աստ ի գլշերիս հանդիլ  
առ իս, Մելիքէէ,  
Ի դալար տերեւակոյտ. են իսկ հա-  
սուն մեղ աստ խընձորք,  
Են քընքուշ աստ շագանակք, է մեղ  
կաթին կիթ յորդառատ.  
Բարձրածայրք ի բացէ ահա ծըխէն  
գըմբէթք շինից,  
Եւ ձըտին երկայնին ըստուեցք լե-  
րանց ահա բարձանց:

### ԾԱՆ 0 ԹՈՒԹԻՒՆՔ

6. իմա զարձագանգս, որ յաճախեն ի  
լերինս և յանտառս:
7. Ասուստ կոչէ զնկտաւիանոս, մինչ  
չե երնորա զաստուածական առեալ  
պաշտօն :
51. Ալեոր զանձն իւր կեղծէ՝ որ պատա-  
նին էր, քանզի չեր մարթսորըկի առ-  
նուլ ազատութիւն առանց վաստա-  
կոց և բազմամեայ ծառայութեան:

36. Պլախեկից , այսինքն է գոյից կամ դրամոց . այսոցիկ կրկին նշանակութեանց պախեկի , այսինքն դրամոց և անդէոց , այն են պատճառք , զի ամենայն մեծութիւնքնախնեացի ի խաշինս էր և յանդեայս , վասն որոյ և նախկին դրամք ըստ կասիոդորի և Սուխդայ էին կաշեայք՝ զպատկեր անդէոց բերելով . և ըստ Պլինեայ ի պղղնձի դրամս նախնիս դրոշմեր գլուխ ոչխարի կամ արջառոյ :
36. Ծահօթ Քերոց , այսինքն Մինկեայ և Պադոսի :
58. Քանզիցանկը անջրպետէին ընդսահմանս անդաստանաց , և ցանկը այնուքիկ կազմէին յուռեաց , յօրս մեղուք՝ սիրատարփք ծաղկանց ուռենւոյ շուրջ յածեալ , հրաւիրեն բզզանօքն ընաւորապէս ի նինջ : Խոկ հիբլան կոչէ զմեղուս , քանզի Հիբլա գաւառ Սիկիլոյ և լեառն բերէ մեղք ազնիւ :
67. Աքարէս զետ ի Գաաղիա , որ ի Վաւուգեայ լեռնէ բզբսնալ խառնի ընդ չոռդանոս առ լուգդոն քաղաքաւ , և ընդ նմա ի միջերկրականն հոսէ ի ծով :
70. Ուստի քաղաք և գետ ի Կրետէ :
71. Քանզի հինք տիեզերս կոչէին զցամաքն մեծ պատեալ յովկիանոսէ , վասն որոյ և զկզզիս օր ի նմա՝ արտաքոյ տիեզերաց համարէին :
79. Բացադառութիւն հեգնական առ ինքն , իբր առ սրտին զայրպյթ եակե-

- րելով զվաստակս իւր , վասն մշակելոյիւրոյ զայգիս և զծառսի վայելումն բարբարոսաց :
84. Սինչ , լու . Կյուս , ազգ ինչ խոտոյ կամ թփոյ , որով զիրանան խաշինք , և առատ մատուցանեն կաթն : Ի կիթնոս կզզի , մի ի կիւկլադայց , ասի գտեալ թուփս այս , ուստի և զանունն առեալ :
-



ԱԼԵՔՍԻՍ

Վիրդիւ զալատանին իւր սիրելի կոչէ ի  
ամա Ալեքսիս, իսկ զինքն կորիդոն. եւ  
եպերեալնախ զիստութիւն պատանւոյն,  
պարծի ապա ընդ ինչս իւր, ընդ գեղ եւ  
ընդ հմտութիւն երգոց, եւ հրաւիրէ զնա  
յանտառս՝ դշինական գովելով կենցաղ,  
եւ խոստանայ նմա պարգևս. եւ ապա իրը  
թէ սմժափեալ յարբեցութենէ սիրոյ,  
դառնայ յառտնին հոգս :

Ոչ է մարթ զհաւաստեամն գիտել թէ  
ու պատանին այն իցէ լեալ. բայց թուի մի  
յազատորդւոց յանձնեալ Վիրդիլեայ ի  
վարժս, եւ անփոյթ խրատուց վարժապե-  
տին, որ զինամն իւր առնա աստանօր այ-  
լարանեալ քաղցրախառն սպառնալեօք  
զրաւ առնէ ողոքանացն :

ԶԱԼԵՔՍԻՍ ըքքնաղագեղ սիրեր հո-  
վելն կորիդոն  
Զանձկալին տեառըն իւրոյ, եւ յոյս  
եւ ոչ մի զնա ամուիրէր.

Բայց միայն մենաւոր՝ ի թաւամուր  
միջնաց անտառ  
Գնայր նա ստէպ, ուր գագաթունք  
հովանախիտ սաւառնէին,  
Զուր լերանց եւ մայրեաց հեղուլ  
բողոք սիրայորդոր.  
Ալեքս անկարեկիր, ոչ քեզ լերդոցս  
իմոց է փոյթ,  
Եւ ոչ ողօրմիս ինձ. ի մահ ուրեմն  
ստիպես զիս:  
Ահա խաչն ի զովացիկ արդ վայելէ  
ի հովանի,  
Ահա կանաչ մողեզաց ասպընջա-  
կանիք լինին մացառք.  
Եւ թեսաիլ՝ պարտասելոցն ի հունձ  
յեւանդն արփիսահրատ՝  
Ըզբուսակս հոտեւանս լեսու վարո-  
տոր եւ ըզծոթրին.  
Այլ ընդ իս, մինչ ըզքեզ հետազօ-  
տեմ, կերկերաձայնք  
Հընչեն ճշպուռնիք ի թըփուտս ընդ  
բոցակէզ արեգակամբ:  
Ոչ լաւ եւս էր բերել զԱմարիլեայ  
եւ զՄենակայ  
Ըզգառըն զայրոյթ եւ ըզձանձիր  
ամբուրհաւաճ.

Թէպէտ նա թըխատիպ, թէպէտ եւ  
դու սպիտակափայլ,  
Պարմանիտ գեղանի, մի յոյժ ի գոյն  
վրատահանար.  
Խոտին պայծառ բարձուենեակը,  
եւ կապուտակ քաղին յակինթը:  
Արհամարհես զիս, ո Ալեքս, եւ  
ոչ թէ ո իցեմ խընդրես,  
Եւ քանի հարուստ խաշամբք եւ  
Ճոխ ի կաթըն ձիւնաթոյր,  
Հազարք ի սիկուլէան լերինս ամիկք  
ինձ թափառին.  
Ոչ զամառն ինձ դալոր պակասէ  
կիթ, ոչ ի սարտուռ:  
Երդ ըզնոյն նուագեմ որ ինչ ի ծու  
վափինեայն ի յԱրակինթ  
Երգել արկեանն Ամիկիոն սովոր ի  
կոչ էր անդէոց: 24  
Չեմ այնչափ ինչ անգեղեայ, զիս ի  
ծովափն այժմ իսկ տեսի  
Մինչ անծուփ կայր ի հողմոց. ի  
Դափնեայ իսկ չերկընչիմ  
Իքումդ ատենի, եթէ չպատրէ եր-  
բէք սրատիեր:  
Եցիւ բնակել եւեթ ընդ իս էր քեզ  
յանկարծ ախորժելի

Ի խըրճիթ անփառառնակ եւ ի խո-  
տան քեղ արտօրէս ,  
Կամ հարուշ զեղիբուս , եւ ըդքո-  
չից ի միասին  
Հովլուել ըզհօրան գալարագեղ ի  
տըզաւնիս ,  
Եւ յանտառս երգակից ընդ իս ըդ-  
գան նըւագիկիր ,  
ԸզՊան՝ որ զեղեգունս ուսոյց յո-  
գունս կըցել մոմով , 55  
ԸզՊան՝ որ խաշնն , նոյն եւ հովլուին  
արկանէ խնամ ,  
Եւ ոչ զեղջ լինէր մաշէլ քեղ ըդ-  
շըրթնեակ քո եղեդամբ :  
Զի՞նչ խիկ Ամինտաս ոչ առ ի սոյն  
արար ի վարժ .  
Է սրինդ ինձ յեօթնեկի յանդցոյդ  
ծղօտից շարայարեալ ,  
Զոր ինձ երբեմն ի պարգև ետ Դա-  
մեասս . Դու արդ երկրորդ ,  
Ի զրաւ ոգեւոցն ասելով , դու արդ  
երկրորդ ժաւանդէս զայդ .  
Ասաց Դամեատաս , նախանձ անմիտն  
երեր Ամինտ :  
Այծեմունք են իմ կըրկնակ դը-  
տեալք ի ձոր ոչ անվըտանդ ,

Զորսո քեղ պահեմ , զեւ այն ինչ  
ի սպիտակ խոյժեալս ի բղէտ ,  
Զերկուորեակս հանապաղօր ի ծուծ  
զըստին ըստառելով .  
Վաղ ուրեմն ըզնոտին խընդրէ առ-  
նուշ յինէն թեսափի ,  
Եւ առցէ խակ , զի խոտան յաջս  
քո նուերքըս մեր թըլին :  
Արի եկ , պատանեկիկ ըզքնաղա-  
գեղ , Եկ այսր առ իս .  
Քեղ շուշանս յաւերժհարսունք  
բերեն լիովք ահա կայթիւք .  
Ծահպուրակ պայծառագեղն քեղ  
Կայիս քաղէ գունատ , 48  
Զօնօրս կակաչ եւ զանեթոն կապէ ,  
բուրեան խառն ընդ նարգէս . 49  
Եւ յեւեալ ընդ նարդոս ու նդ այլ  
բուսակս անուշահոսս  
Երգունէ զյակինթ քընկըուշ եւ ըդ-  
գեղձան արեւադէմ :  
Խակ ես ալեւորիկ քեղ յաղըւամա .  
զըս սերկեւիլ  
Քաղեցից եւ շագանակ զոր սիրէր  
իմս Ամարկլիս .  
Յաւելց եւ չէկ ըդոր , մի եւ մըր  
զիկն այն խոտեացի :

Հատից եւ զձեղ սարդենիք , եւ  
զքեղ մօտիկըդ մըրտենի .  
Զի բուրումն անուշից խառնեսջիք  
մերձ եղեալ միմեանց :  
Գեղջուկ ես , Կորիգոն . խոաէ զըն-  
ծայս քո Ալեքսիս ,  
Եւ ձօնիւք եթէ մըրցիս , ոչ քեղ  
տեղի տացէ Յոլաս :  
Աւազ եղուկ , զինչ հիքիս ինձ հնա-  
րեցայ . արկի զիսորշակ  
Ծանծաղալամիտսի ծաղկոց , եւ ի վը-  
ճիտ աղբիւր ըզկինձ : 60  
ԱՇ , յումմէ խուսես , անմիտ . դիք  
իսկ եղեն անտառաբնակք ,  
Դարդանիկն իսկ Պարիս , և յիւրա-  
կերան ինքըն Պալաս 62  
Ի դըլեկի անդ բնակէ . մեղ գերա-  
բնակք լիցին անտառք :  
Ասիւծ ամենի հալածէ զգայլ , եւ  
գայլ իսկ զայծ ,  
Եւ այծ ըստահակ ըզծաղկաւէտ  
խընդըէ ըզսինձ .  
Իսկ ըզհետ քո ի խընդիր է Կորի-  
գոն , ո Ալեքսիս .  
Իւրում իւրաքանչիւր ոք ցանկու-  
թեան ձըգի ըզհետ ,

ԱՅԼ երինջք յետս աւասիկ ածեն  
զարօր լցոնք ի լըծոյ , 68  
Եւ տեղի տայ արեգակըն զանեցուն  
ձըգտեալ ըստուերս .  
Խակ զիս տոչորէ սէր , եւ չիք սիրոյ  
դուլ եւ դադար .  
ԱՇ , Կորիգոն Կորիգոն , զինչ այդ  
քոյին անմըտութիւն .  
Կիսայատ մընայ քեղ որթ սաղար-  
դագեղ ի նըշդարւոջ :  
Առ իմշ գէթ ի յօզոր կամ ի ձա-  
պուկ դու ի պըրատու .  
Ոչ հիւսել ինչ հայթհայթես , ոյց  
շնական կարօտին պէտք . 74  
Գըտցէս զոյլոք Ալեքսիս , եթէ դա  
զքեղ արհամարհէ :

ԾԱՆ 0 ԹՈՒԹԻՒՆՔ


23. Արտինի լւառն ծովահայեաց ի Բիովէ  
տիս մէրձ ի Յերէ :
24. ԱՌէիսն որդի Արամազդայ և Անտիո-  
պեայ . քանզի Անտիոպէ եր կին Լի-  
կոսի արքային թեքացւոց , արձա-  
կեալ ինմանէ , և ի Տէրկեայ երկրորդ  
կնոջէ նորա ի բանտ արկեալ : Բայց  
յերկունս գոլով Անտիոպեայ աղա-

- տեաց զնա Արամաղդ ի բանտէ . և  
խոյս տուեալ նորա ի լեառն կիթե-  
րոն , ճնաւ անդ երկուորեակս ի բա-  
ցի . զորս գտեալ հովուաց , զմի ի նո-  
ցանէ կոչեցին ջեստոս , իսկ զմիւսն  
Ամփիոն : Սորա ապա ի զարդանալ  
իւրեանց խնդրեցին զվուժ մօր իւ-  
րեանց՝ սպանեալ զծերկէ , զոր Դիս-  
նիս այլակերպեաց յաղըիւրն համա-  
նուն մերձ ի թերե . ուստի Ամփիոն  
զմականունն առեալ կոչի տիրկեան :
55. Պատ շինական և հովուական իրաց  
վերակացու դիք , որ ուսոյց կազմել  
զարինգ յանհաւասար եղեգանց , յօ-  
րինեալ զայն նախ ի պատճառս սի-  
րուհւոյն իւրոյ Արնդի յաւէրժհար-  
սին՝ որ նածշտացն նորա աղաշանօք  
յեղէգն փոխեցաւ , վամն որոյ և զնր-  
ւագարանն զայն ասեն ո՞ինդ կոչե-  
ցեալ :
47. Յաւէրժհարսունք կոչին առ Հելլենս  
Նիմիայք , այսինքն նորահարսունք :  
Դիցուհիքս այսորիկ ըստ Պաւսա-  
նեայ չեն անմահք , այլ երկարա-  
կեացք յոյժ : Որք ի սոցանէ գետոց  
էին շահապետք՝ կոչէին Նայադք , որք  
ծովուց՝ Ներեանք , իւր Ներէի և Դո-  
րեայ դատերք . որք լերանց էին վե-  
րակացուք՝ կոչէին Որէադք , որք ծա-  
ռոց և անտառաց՝ Դրիադք և Համա-  
գրիադք , զի համարէին մեռաննել ընդ  
ծառս՝ յորս բնակէին . Պարտիզացն  
սստիկանք՝ կոչէին Նապեանք , արօ-

- տիցն՝ Նիմնիադք , իսկ Եճացն՝ Նիմ-  
նիադք :
48. Շահապուրակաց գունագոյն աղդք են ,  
կարմիր , վարդագոյն , սպիտակ , և  
սյն . այլաստ սպիտակն բուռնադ ակ-  
նարկէ ի գոյն սիրոյ :
49. Կակաչ , Նարկիս և Անեթոն պատա-  
նիք գեղանիք էին , որ ապա ըստ ա-  
ռասպելաց ի համանուն ծաղկունս  
փոխեցան : Կորիգոնն ի մասուցաննել  
Ալեքսի զծաղկունս զայսոսիկ ազդ  
առնէ նմա թէ գուցէ նոյն անցք և  
ընդ նա անցանիցեն :
50. Ակնարկէ ի սնոտի վաստակս իւր , իր  
թէ զծաղկոց մատնէր խորշակի , և  
կնճից զականակիս աղբերս :
62. Պարիս որդի Պրիամու և Եկովրայ ,  
արկեալ ի հօրէ իւրմէ յանտառս .  
քանզի Եկովրայ տեսանելով յերա-  
զի զահ բոցավառ յիւրմէ ներալ , գու-  
շակեցին երազահմայք զի առիթ կոր-  
ծանման Տրովադայ հանդերձեալ էր  
ծնանել մանուկն : Վամն որոյ մնաւ  
ընդ հովիւս . և ի տօնն խաղուց մըրց-  
մանց ի Տրովադա պարտեալ ի նմա-  
նէ Հեկտոր , մինչդեռ առ զայրոյթ  
սրտին կամքը զնա սպանաննել ծա-  
նեաւ զի եղբայր իւր էր : Եւ կոչի նա  
Դարդանին ի Դարդանոսէ , որ մի էր  
ի կառուցողաց քաղաքին Տրովադայ :  
Պալւաս գուստր Արամազդայ , դիք  
արուեստից և շնուռածոց համարէին կառու-  
ցեալ դդղեակ իւրեանց :

68. Աստ ուրեմն կարիդոն ի դադարելոյ  
արջառոց յաշխատութենէ և ի մտից  
արեգական ի միտ առեալ զկորուսա  
ժամանակին, և յարբեցութենէ սի-  
րոյ սթափեալ և զդաստացեալ, մե-  
ղադրէ անձին :
74. Այսինքն կողովոց և սակառեաց, և  
այլն, որոց կարօտին շինականք :
- 

ՇԱՂԿԱՔԱՂ ԵՐՐՈՐԴ



ՊԱԼԵՄՈՆ

Մենալկայ և Դամետայ Հովուաց նախ  
բանակռուութիւն ընդ միմեանս, և ա-  
պա երգոց պայքար . և յետ այնորիկ վը-  
ճիռ. Պաշտմնի զնոցանէ : Դասն որոյ ՚ի  
դատաւորէն երգս այս զանունն կալաւ. և  
կարծի Դամետայ զՎիրգիլեայ բերելաստ  
զդէմն, և Մենալկայ զուրուք ի նախան-  
ձորդաց նորա :

ՄԵՆԱԼԿԱՅ, ԴԱՄԵՏԱՅ,  
ՊԱԼԵՄՈՆ

Մենալկաս

Ոյր են խաշինքըդ, Դամետաս, ա-  
զէ ասա ինձ, Մելիքեայ :

Դամետաս

Ոչ, այլ Եգոնի. այժմ իսկ յահճ-  
նեաց ինձ զայն Եգոն :

### Մենաշխառ

Թըշուառականք միշտ անդեպք ,  
ինքն անդ տածէ ըղչեւերա , օ  
ջի մի նախամեծար քան զինքըն  
զիս նա առնիցէ ,  
Եւ երկիցս աստ ի ժամու հովիւ օ-  
տար կըթէ ըզհօտ ,  
Ըզմաքւոյն քաղեալ զոգիս եւ ըզ-  
կաթն ուղցըն գողացեալ :

### Դամենասս

Սակայն յուշ , յուշ լիցի քեզ ըզ-  
դուշագոյնըս զայդոսիկ  
Մեղադըելորերոյ . գիտեմք եւ նյք  
ընդ քեզ անկեալ ,  
Եւ յորում իսկ մէհենի խեթիւ ի  
քեզ դիտեալ խոյոց . 9  
Այլ ընդ քիմըս ժըպտեցան ընդայն  
ներող յաւերժհարառունք :

### Մենաշխառ

Թէրեւս անդ ժըպտեալնոցա , մինչ  
զայդեստանըս Միկոնի 11

Եւ ըզթըփուաըս նորատունիս հա-  
տանիէի ժամա մանգաղու :

### Դամենասս

Կամ թէ աստ առ զառամ փիճեօք  
զաղեղն յորժամ Դափնեայ ,  
Ապառում Մենալկաս , եւ զեղե-  
գունսըն փրշքեցեր ,  
Նախանձ մանկանըն բերելով մինչ  
այնոքիկ արւան նըմա .  
Եւ մեռեալ արդեօք եիր , զեան ինչ  
թէ նմա չէր հասուցեալ :

### Մենաշխառ

Զի՞նչ իսկ տեարց իցէ առնել , թէ  
գող մանկաին ժըպրհի ցայդ վայր .  
Ոչ ես իսկ տեսի ըզքեզ , ով ժան-  
տաժուատ , յորժամ դաւով  
Ի սոէսլ հաջիւն Նիկիսկայ բառ-  
նայիր զայծըն Դամոնի .  
Եւ ի ձայնել իմում թէ ուր խու-  
սափէ դա այժմիկ ի բաց ,  
Զայն Տիափրէ տուր հօտիդ , դու-  
յետկուսէ պըրտուոց թագեար :

Դամեսաս

Այլ ոչ ապաքէն պարտեալ նա  
յերդ՝ պարտէր ինձ զայծն,  
Ում տաղց ի գուպար գոյր եղեգ-  
նեակն իմ արժանի.  
Իմ էր այծիկն այն, ոչ դիտես, Դա-  
մն իսկ զայն ինձ ոչ ժըխտէր,  
Այլ վիճեալ պընդէր չկարել ինձ  
զանասնեակն հատուցանել:

Մենաշխաս

Դու ընդ նմա ի գուպար. Էր իսկ  
սըրինդ քեզ մոմակուռ,  
Ովաներաժիշտ, ոչ դու ի գուհա  
իցես սովոր 27  
Ի ծիլ կերկերոս արկանել տաղս  
արտանըւագո:

Դամեսաս

Համա ի վեդ ընդ միմեանս ի փորձ  
տաղց Եկ մատիցուք.  
Ես զերինջըս զայս գընեմ, զի մի  
հրաժեշտ մերժեալ տացես.

Գայ Երկիցս ի գուշ կաթին, տածէ  
որթուկս ըստեամբն Երկուս:  
Իսկ դու զի՞նչ եղեալ ի դրաւ ընդ  
իս, ասա ինձ, մարտիցես:

Մենաշխաս

Ի հօտէն չիշխեմ եւ ոչ կըճղակ մի  
տալ քեզ յերաշխի.  
Զի է առարնին ինձ հայր, է ժանա  
ինձ եւ մօրու.  
Երկիցս ըզիսաշն Երկոքեան, իսկ զու-  
լըս մին թըւէ յաւուր:  
Այլ զորըս դու իսկ անշուշտ գեր ի  
վերոյ վարկանիցիս,  
Բաժակս Երկու եղից վիճեայս,  
(Քանզի կամիս անմըսանալ),  
Գործ Ճարտարին Ալկիմեդեայ, զո-  
րովք Ճամպուկ Ճախարակեայ  
Բաղեղան շուրջանակի քանդեալ  
ըստեզըն պատաղիք,  
Գունատ սաղարթիւք զըսիիւռ ող-  
կոյզըն պարուրէ.  
Կըրկինակ ի միջի տիպէ. Կոնոն, իսկ  
ո միւսն այն եկաց 41

Որ ըղիանուրց աղանց էառ ծրա-  
գրել զոլորտը մականաւ,  
Երբ արտունձ վաստակիցի, եւ երբ  
եղող կորաքամակ,  
Ի պահեստի զայնս ունիմ, չեւ իսկ  
հըպեալ շուրթն ի նոսին:

### Պամետաս

Մեղ իսկ բաժակըս կըրկին նա ինքն  
արար Ալկիմեդոն,  
Գոլորիկ բուսակ ականթի դըրուագ  
զանգեղբըն շուրջ ածեալ,  
Եւ զնրփեւս ի միջի՝ զանտառս ըղ-  
հետ իւր ձըգելով: 47  
Ի պահեստի զայնս ունիմ, չեւ իսկ  
հըպեալ շուրթն ի նոսին:  
Այլ մի իւիք ըղբաժակս առ երըն-  
ջովք դըրուատիցեա:

### Մենալիաս

Չիքքեղեւ չիքսերկեան վախուսա,  
Եկից ուր ձայն ինձ եւ տացես.  
Կըստի որ գայն դատաւոր, ահա-  
ւասիկ գայ Պալեմոն:

Արտրից՝ զիմի ումեք լիցիս այլեւըս  
ձայնատուր:

### Պամետաս

Բեր օն ապա, թէ է ինչ քո, աւա-  
սիկ կամ կազմ եւ պատրաստ,  
Ոչ խուսափեմ յումեքէ, միայն, մօ-  
ափիկ ինձ Պալեմոն,  
Ոչ դոյզն ինչ իրք Էն աստանօր,  
զուշ եւ զուրուշ մատո ի լուր:

### Պաշեմոն

Ասէք նըւագ, ահա բաղմիմք ասա  
ի քընըուշըս դալարւոջ.  
Արդ արտորայք համօրէն, երկինն  
բոլոր արդ ծառաստանիք.  
Տերեւին այժմիկ անտառոք, ամենա-  
գեղ տմա է այժմիկ.  
Ըսկըսիր, Դամեասս, զու զհետ ա-  
պա կըցեա, ՄԵհալի.  
Փոխ առ փոխ Երգեցէք, սիրեն փո-  
փոխ զերդ Կամենայք:

Դամեսաս

ՅՈՐՄԸՂԴԵ սկըսցուք, Մուսայք, լի  
ՈՐՄԸՂԴԻ ԵՆ համագոյք. 61  
Նա զերկիր բեղնաւորէ, նըմա զի-  
մոցս է հոգ տաղեց:

Մեմաղկաս

Եւ յիս հաշտ հայի Փեքոս, է նուի-  
րական Փեքեայ ի ձօն 65  
Առ իս սարդ եւ յակինթ վայելքա-  
գեղ ծիրաներփնեալ:

Դամեսաս

Ձըգէ դըստրիկն ըստահակ Գալա-  
տէա ի յիս խընձոր,  
Եւ թաքչի յուռեստան՝ ըղձացեալ  
յակն անկանելնախ:

Մեմաղկաս

ԱՅԼ ինձ բոցն իմ Ամինասս յօժա-  
րակամ դայ յերեան,

Քան զոր ոչ իսկ Դելիա ընտանե-  
գոյն մերոցս է շանց: 68

Դամեսաս

Առձեռն ինձ կան Աստղըկան իմում  
նըւէրք, դիտեալ իմ վաղ 69  
Ո՛ւր օդայինք դընեն զիւրեանց բոյ-  
նըս վայրի աղաւնիք: 70

Մեմաղկաս

Խընձոր ոսկեգոյն, որչափ եղէ ես  
ձեռընհաս,  
Ի վայրենեաց ծառոց քաղեալ առ  
պատանեակն առաքեցի  
Հընդեակըս կըրկին, այլս առ վա-  
ղեւ առաքեցից:

Դամեսաս

Ո՛վ քանիցըս մեզ եւ զլինչ ինչ խօ-  
սեցաւ Գալատէա,  
Փոքր իշատէ տարայք զայն, տարայք,  
հողմունիք, յունին աստուածոց: 73

### Մենաշխառ

Եւ զի՞նչ այն զի դու ի սիրտ քո ոչ  
խոռակ զիս, ո՛ Ամինտ, 76

Թէ վարժից կամ ես ի տահ մինչ  
վարազուց դու զհետ սլընդիս:

### Դամեսառ

Ծընունդք են իմ, ո՛լ իմն Յոլաս,  
առ իս յըղեա ըղփիլիս. 78

Յորժամ ի զոհ արմբառեաց մատու-  
ցից զորթ, դու ինքն արեկ:

### Մենաշխառ

Սիրուն քան զայլս է ինձ ֆիլիս, զի  
նա ընդ չու իմ, ո՛ Յոլաս,

Ելաց եւ ստէպ ասէր նա ցիս. Երթ,  
գեղանիդ դու, Երթ ողջամբ:

### Դամեսառ

Գայլ հօտից դըժպըհի, հասկահա-  
սուն արմբառեաց թօնք.

Հողմունք ծառաստանին, իսկ մեզ  
ցատումն Ամարիլլեայ:

### Մենաշխառ

Յօղ դալարւոյ, մաթուղ ախորժու-  
լից ի ստեանց հատուցելոց,  
Սաղմնառիկ խաշին գողարիկ ուսի,  
իսկ ինձ Ամինտ եւեթ:

### Դամեսառ

Սիրէ զՄուսայն մեր Պոլլիսն, թէ-  
պէտ և սա իցէ գեղջուկ. 86

Երինջ ձերումդ ընտրողի արածե-  
ցէք, ո՛լ Պիերեանք:

### Մենաշխառ

Կորոգ նա ինքն յօրինէ տաղըս Պոլ-  
լիսն, արածեցէք

Կըմա եղջերքն ոգորող ցուլ՝ որ կըճ.  
զակօքն հողահանէ:

### Դամեսառ

Որ զքեզ սիրէն, Պոլլիսն, հասցէ  
վառացգ՝ ընդ որ բերկիրի.

Կըմա մեղք յորդեսցէ , եւ ամոմնն  
բերցեն փուշք ժանտք : 91

### Մենաշկաս

Որ զբաւիսս ոչ ատեայ՝ սիրեսցէ  
զերդըս քո , Մեւի . 92  
Կոյն զաղուէսըս լըծեսցէ , եւ կը-  
թեսցէ կաթն ի խոյոց :

### Դամեստաս

Ոքք ըղծաղկունըս քաղէք , եւ որք  
զելակ գետնանախանձ ,  
Փախերուք այտի մանկունք , ցուրա  
ընդ սիզովքդ իժ դարանի :

### Մենաշկաս

Մի կարի յառաջ մատչեք , չեք ի դե-  
տափիրն վըստահել  
Ո՛վ խաշնք . ահա նոխազ իսկ դեռ  
ըզգէս իւր յարագէ :

### Դամեստաս

Տիտիրէ , զհօրանս ի բաց առ ի դե-  
տոյդ ճարակաւորս .

Ես ինձէն առեալպարապ , լուսցից  
ըզմէն մի ի յաղբեր :

### Մենաշկաս

Զիսաշն ի փարախ ածէք , մանկունք .  
Ծէ տօթ ըղկաթըն շըճեսցէ ,  
Որպէս սակաւ մի յառաջ , զուր  
ճըմլեսցուք զըստինս ափուլք :

### Դամեստաս

Ո՛հ , քանիօն յարօտ պարարտ ոյծ  
եւ նիշար է ինձ զուարակ .  
Հաշէ մաշէ նոյն անձուկ ըղհօտ խա-  
շնն եւ զիսաշնարած :

### Մենաշկաս

Չիք իսկ այդ իմոցս առիթ , սակայն  
յոսկերս հազիւ կան յեց .  
Ո՛վ իսկ չարակն , ոչ դիտեմ , ըզմա-  
տաղ ուլս իմ յաչաղէ :

### Դամեստաս

Յո՞ր երկիր , աղէ , ասա , եւ լիցիս  
վէհ ինձ Ապոլոն , 106

Բանան Երկինք Երից եւ ոչ ինչ ա-  
ւելի կանգնաց՝ ի չափ:

### Մեմաշիաս

Յոր Երկիր, աղէ ասա, արքունա-  
նական գրումեալ անուամբը  
Դանի վրթիթը ծաղկունք, եւ դու  
զիթլիս ժառանգեսցես:

### Պայեւնոն

Ոչ է մեղ այդքանոյ վիճիդ ձեղ կալ  
իրաւարար.  
Արժանի եք Երընջոյն եւ դու եւ դա  
եւ որ այլոք  
Քաղցր ըզմիրոյ կասկածանաց կամ  
ըզտառինց աւնու ըզփորձ.  
Խըցէք ըզջրադարձս, հերիք ման-  
կունիք արքին արօտք:

Ծ ԱՆ Օ ԹՌԻ ԹԻ ԻՆՎ

5. Թշուառականս ասէ դհօտս, եթէ  
Հովիւք պարապեալ ի սէր՝ թողուն  
զնոսա ի ձեռս օտարաց:
9. Խելիս դիրուլ խոյոց ակնարկէ ի վա-

ւաշ բնաւորութիւննոցա, որով իբր  
թէ նախանձին ընդ տռափանս այլոց:  
11. Հեղնօրէն խօսի՝ զԴամետայ մեղանա  
անձին ընծայելով, ուր զնա ինքն յան-  
դիմանէ:

27. Սովորութիւն եր գեղջկաց նուա-  
գել ընդ գուեհո ի պատիւ Արտեմետայ  
կամ Պրոսերպինայ ողբս բատ օրի-  
նակին Դեմետրի, որ ի յափշտակէլ  
Պլատոնի զիին նորա զԱրտեմիս՝ ի  
ինդիր նորին շրջէր ողբովք ընդ  
գուեհո:

41. Կոնոն, ոչ զօրավարն աթենացի հըռ-  
չակաւոր, այլ աստեղարաշինն սամե-  
ցի մեծանուն՝ որ ի շնորհս Պաղոմեայ  
Եւերգետեայ եգիպտացւոց արքայի  
զզիսակին Բերենիկեայ կնոջ նորա  
յաստեղս ասաց վերաբերեալ:

Ոչ ես ապա յիշելով հովուին զա-  
նուն միւսոյն, անձամբ անձին հար-  
ցանէ. և ոչ այնպէս ուշ ի կուրծս  
անկեալ ի գործոց զնորին տայ նը-  
կարագիր, մանաւանդ ի ցուցանելոյ  
նորա զժամանակս սերմանելոյ և ա-  
կօսադիր առնելոյ: Եւ թուի աստե-  
ղարաշիս այս կամ Արատոս գոլ, որ  
զկայից և զշարժմանց աստեղաց ա-  
ռար քերթուած զուարծալի ի յոյն  
բառ՝ որ և թարդմանեալ եր լատի-  
ներէն. կամ Եսիոդոս, որ ընդ այլ  
քերթուածս արար և զմշակականն  
որ մակագրի Գործք և տիւ. և կամ  
մանաւանդ Արքիմեդէս աշակերտ

- կամ բարեկամ կոնոնի, գերահռչակ  
չափաբան և պատերազմական կազ-  
մածոց հնարագէտ, որ ի պատերազ-  
մին Ալրակուսայ յանձմանօթիւ ու մե-  
մնէ ի զինուորաց Մարկելեայ սպա-  
նաւ՝ մինչ ձեւ երկրաչափականս ի  
փոշոջ գծագրէր :
47. Որդիէ որդւոյ Ապոլոնի՝ քնարաւն  
իւրով ստնակառել զգետս, զան-  
տառս դնացուցանել և զգազանս ա-  
ծել ի զգօնութիւն, յայտ իսկ է:
61. Որմարէ լի ասէ զհամագոյս, զի  
նա համարէր իշխան աստուածոց, և  
զի դարձեալ Որմիզդ կոչէին և օդք՝  
որով լի է ամենայն :
65. Փէքունոյն է ընդ Ապոլոնի և ընդ ա-  
րեգական, հնարագէտ բժշկութեան,  
և դիք հմայից երած շտութեան և բա-  
նաստեղծութեան :
68. Դելք, Արտեմիս կամ լուսին, դի-  
ցուչի որսոց և խնամակալ շանց, որ  
Դելիս կամ դելեան կոչի ի Դելոս  
կղզոյ՝ ուր ծնաւն: Այլ կէսք առ-  
նուն զԴելիս իրը անուն աղախնոյն  
Մենալկայ, որում առաւել պատշա-  
ճի ընտանութիւն շանցն :
69. Աստղէ իւր կոչէ Դամետաս զսի-  
րուչին :
70. Աղաւնիք համարին նուիրականք Ա-  
տրդկան, և լծին ի կառս նորա. թեր-  
ևս վասն այն իսկ կոչին օդայինք, և  
կամ վասն թեթեաթուիչս դոլոյ և ի  
բարձունս ծառոց դնելոյ զբոյնս :

75. Վկայս խոստմանց սիրուհւոյն կամի  
Դամետաս զդիս :
76. Մենալկաս առաւելագոյն սիրով վա-  
ռեալ չկամի զապահովութիւն իւր,  
այլ ինդրէ հաղորդս գոլ վտանգի  
սիրուհւոյն :
78. Յուլու հովիւ բարեկամ Դամետայ և  
Մենալկայ, և Փէլլիս աղախննորա:
86. Պիլլիս Ճարտարախօս անուանի  
պատմիչ բանաստեղծ, որ և բդեալս  
եկաց ի Հռովմ, և զիառս յաղթա-  
նակի տարաւ, յորս ակնարկէ ապա  
ի տողն 90:
87. Պիերեանս կոչին ինն Մուսայք ինաւ  
մակալք գեղարուեստից, ծնեալք ի  
Պիերիոն լերին թեսաղիոյ յԱրա-  
մազդայ եւ ի Մնեմոսինեայ :
91. Ամուսնա ազդ խնկենւոյ, որ բուսանի  
յԱսորեստան, ի Հայս, ի Պոնտոս և  
ի Մարս :
92. Բատիս և Մեւիսս քերթողք անա-  
րուեստք, սոսիք Վիրդիլեայ և Որա-  
տեայ: Աստ Մենալկաս հակառակ  
բարեմազդութեանն Դամետայ չա-  
րամազդէ սիրոզացն Բաւիսսի այն-  
պէս անմտանալ մինչև սիրել զերգս  
Մեւեայ, և զաղուէս լծել, և այլն:
106. Երկոքին ևս անպարտելիք ի մըրց-  
մունս երգոց, ձեռնարկեն յառեղ-  
ծուածս. որոց այլք այլազգ տան ի-  
մասսոս, այլ զասոյգ իմացուած նոցա  
վիրդիլեայ ևեթ է գիտել և ժամա-  
նակակցաց նորին դուշակել:



ՊՈԼԼԻԱՆԵ

Ի կատարած պերուսեան մարտին Անտոնիոս բազում իրօք ոխացեալ ընդ Ոկտափանոսի, զօրու ծանու եկն յիտայիա: Այլ մերձ ի բունդուսիոն ի հաշտութիւն խօսեցեալ ի ձեռն կոկկէի երկաքանչիւրցն բարեկամի, հրեշտակութեամբ Մեկենասայ ի գիմաց Ոկտոսիանոսի, և Պոլլիոնի ի գիմաց Անտոնիոսի, մաին յաղթանակաւ երկաքանչիւր ի Հռովմ: Յետ ոչ բազում աւուրց Պոմպէոս, մեծին Պոմպէի որդի, կալեալ զԱլկիլիա՝ արգել զհամբարս, և ի սովէարկ զՀռովմ: և Ոկտափանոս և Անտոնիոս ստիպեցան խօսել ընդ նմա ի հաշտութիւն: Որով սովոյն ի բաց բարձեալ վտանգ, և պատերազմաց եղեալ լոռութիւն, գոզցես իմն դարն ոսկեղինիկ յաւուրմն յայնոսիկ դառնայր ի Հռովմ: Եւ զի այս ամենայն ի վերջիս իշխանութեան Պոլլիոնի բուշի և ի ձեռն նորին յաջողէր, և որդի իսկ նմա յաւուրմն յայնոսիկ ծնաներ նմին իրի Վիրգիլիոս իբր ի ծնունդ նորածին ման-

կանն երգէ զայս, ի ճահ տռեալ ժամանա-  
կին՝ որ ինչ ի դիրս կումականին Ալբիլայ  
զծնողնէն փրկէնն մերոյ և զօրին  
բանք :

**Ա**լեկելան Մուսայք, առէք վըսե-  
մագոյնս ինչ Երգեսցուք.  
Ոչ բոլորից ախորժելի թուփիք Եւ-  
ցածունք ին մաշնիք,  
Զանտառս ի յերգ առցուք ճն, ի  
ճահ անտառք են բըգեշնին : 1  
Դարձաւ կումականին այժմիկ տա-  
ղի նախկինն այն դար, 4  
Պարագոյց յաւիտենից կարգ մէջ  
ըսկիպըն առնու անդրէն .  
Դարձ այժմիկ առնէ կոյսն, Եւ դարձ  
կըրմւեանն արքայութիւն . 6  
Նոր այժմ աւասիկ իջանէ զարմ  
յերկնից բարձանց,  
Մէրձ եւեթ եթէ կայցես դու զդաս-  
տասէրըդ Լուկինա 8  
Մանկանըն նորածնի, իւ Երկա-  
թեայն առեալ դադար  
Ընդհանուր ախեղը յարիցէ դարն  
ուկեղինիկ.

**Ա**յժմէն աւասիկ թադաւորէ քոյդ  
Ասոլոն,  
Ի քումէք հիւմատով փառքն այն  
դարուց այս սկըսցի,  
Եւ անկցին, Պոլիսն, ամիսն և  
Ճեմ արհիականիք : 15

Քաւեալ մերոյ եղեսան, թէ մնան  
Երեք հետք տակաւին, 14

Քեւ Երկիր յայնժամ կացցէ զերծ  
ի յաւերգ զարհուրանաց :

Կենակից լիցի նա դից, եւ ըզդիւ-  
ցաղն որեարն ընդ իս 16

Տեսցէ պարակից, եւ տեսցի ինքն իսէ  
ի նոցունց,

Եւ տիրեսցէ ընդ տիեզերս ուղղու-  
թեամբք հօրն անդորրացեալս :

**Ա**յլ քեզ ի ձօն նախընծայ ածցէ  
Երկիր ինքնայորդոր

Նարդոս վայրի, ով մանկիկ, ընդ  
պատաղիք թափառական, 20

Եւ խառն ընդ կասիմն յորդեալ  
ականթ գեղածիծալ :

**Ա**յծք ինքնին ուռուցիկ պըտկունս  
ի առն ածցէն կաթամք .

**Ս**ի յառիւծուց ամէհեաց կասկա-  
ծիցէ խաչն և անդեայ :

Քեզ որբանք իսկ ծաղկունս անուշահոտը ըըղիսեսցեն.

Մեռցի իժ, եւ չարաթոյն մեռցի դրուժան դալարաբոյս.

Ծընցի ամսմնն համայն ուրեք ասորնական:

Այն ինչ ապա զգիւցազանց դըրուատ եւ զօրքո զարութիւնս ընթեռնուլ կարիցես եւ գիտել զինչ է լաւութիւն,

Արտօրայք ի հասուն տակաւ ի հասկ խարտեշասցին.

Ի գաղճըն մոլախոտ ովկոյդ ի կախ կայցէ խայծեալ,

Եւ կաղնիք կարծրապինդք քըրտնեսցին մեղքը ցօղազանդ:

Բայց նախնոյն այնորինկ գաւոյն գեռ հեռք ինչ գարանեալ,

Լաստիւք ընդ ծով խիզախել, պատել զաւանըս պարըսալօք,

Եւ զերկիր պատառել հրամայեսցեն ակօսաբեկ.

Միւս եւս յայնժամ կացցէ Տիփիս, միւս զայրընտիրսըն գիւցազունս 55

Բարձեալ բերցէ Արդոնաւ. անդրէն դըրդեալ գոռայցեն մարտք,

Եւ անդրէն ի Տրովադա մէծն Աքելէս արձակեսցի:

Աստեւոր ապա տիոց այն ինչ տծեալ քեզ զաւագոյթ,

Տեղինաւազն իսկ ի ծովէ տացէ, եւ մի լաստ եղենեայ

Վաճառ ընդ վաճառ յայնժամ գնասցէ փոխանակել: 40

Զամենայն ինչ ամենայն ուրեք բերցէ յայնժամ երկիր.

Ոչ սանտերս անդաստան եւ ոչ յօտոց կրեսցէ այդի,

Անդ զեղենս ի լըծոյ լըւծցէ հուժեկու արօրագիր:

Եւ ոչ ասր ի տէսպէս Երանդս ուսցի կեղծաւորել.

Այլ ի մարդս անդ ինքն իսկ խոյ մերթ ի կարմիր քըրքմատեսիկ

Տարբեալ ըզգէս իւր, և մերթ վայելչագեղ ծիրաներփնեալ.

Զառիկ զամիկս ինքնակամ ըզգեցուսցէ ձարակաւորս: 47

Ծիթացէք, դարբդ այդպիսիք, դիցն անյեղլի կացցէ հրաման.

Պարկայք զուգաբարբառ խրախոյս իլոցըն մատուցին: 49

Եքարձը ի բարձ ելամբարձիր, վաղ  
իսկ հասցէք եղ ժամանակ,  
Ո՛վ սիրատուն դիցըն զաւակ և սա-  
նըդ վէհ որմըզգական։  
Տես զոլորածս խորանարդ բեռամ-  
բըն թինդս առեալ առ խինդ,  
Զերկիր եւ զերկին անդընդախոր եւ  
զծով ծաւալ։  
Տես իբր ընդ գալուստ յաւիտենին  
հրաճուին հանուրք։  
Երկարաձիր եթէ յանկարծ մնայցէ  
կենաց մասն ինձ վերջին,  
Եւ զքո երգել արութիւնս որչափ  
ինչ բաւ է ինձ ոգի,  
Ոչ թրակացւոյն նրվիէի աեղի տա-  
ղիւք տաց, ոչ լինեայ։  
Թէպէտ սըմա մոյըն, եւ նըմա թէ-  
պէտ կացցէ հայրն առընթէր,  
Որփիէի Կալլիոպէ, եւ Լինեայ  
Միհրըն գեղանի։ 59  
Ինքն իսկ Պան ընդ իս ի լուր Ար-  
կադիոյ թէ մըրցեսցի,  
Ինքն իսկ Պան կորանս ի յանձն  
առցէ ի լուր Արկադիոյ։ 60  
Իսկ դու սկըսիր, ով մանկիմ, ի ժողիտ  
ըզմայր քո ճանաչել, 61

Մօրքում վիշտ երկարատեւ երկիցս  
հընդեակ ածին ամիսք։ 62  
Ազէ սկըսիր, ով մանկիմ որում  
ծնողացըն չել ժըմիտ,  
Ոչ գեք ի ճաշ, ոչ դիցուհի ընկալցի  
զնա ի յառագաստ։ 63

5. Վասն զի բդեշխից, որոց ժամանակ  
իշխանութեան լցեալ էր, տային կուսա-  
կարութիւն կամ զանտառաց խնամակա-  
լութիւն։

4. Յայտ է զի սիրելլայք տասն էին,  
և ի նոյունց կումականքն երկու, մին ի  
կումա իւոլիոյ կացեալ, և միւմն ի կու-  
մա իտալիոյ։

Ակնարկէ ի դարն ոսկեղինիկ անուա-  
նեալ, որում յաջորդեցին երկրորդն ար-  
ծաթի, երրորդն աղջնձի, և չորրորդն ա-  
պականեալ երկաթի։

6. Կոյսն, այսինքն Աստրէա դիցուհի  
արդարութեան, դուստր Արամազդայ և  
թերմեայ. որ ի նույլ ոսկի դարուն, և ի  
խուսել դից յերկրէ ուր յայնժամ բնա-  
կադիցք համարէն լեալ ընդ մարդկան,  
աեղի եա և ինքն յետ ամենեցուն։

Կրովնեանն արքայութիւն է ոսկեղէնն  
դար. զի կրովնս հայր է Դիսոի ըստ  
առասպելեաց, և ցորչափ նա թագաւոռ-  
ութէ կէին մարդիկ յանմեղութեան, և եր-  
կիր առանց մշակութեան բերէր զպէտն

մարդկան, իսկ ի թագաւորել որդւոյ նոռա Դիտուի, սկսան մարդիկ ի վատթարն նկրտել:

8. Լուկինա դիցուհի խնամակալ ծնընդեան . որոյ օգնականութեամբն ի ըստ գալ մանկան՝ գուշակէ քերթողն զդարձ ոսկի դարուն :

15. Ամիսը արհիականը, որպէս և ի վերոյ կարգ մեծ, իմա երջանիկ կամ բարենշան աւուրու :

14. Եղեռն կոչէ կամ զուխտազանցութիւն արովացւոց, կամ զքաղաքական մարտու կեսարու ընդ Պոմպէի, և կամ զնորին ինքեան կեսարու սպանութիւնն դործեալ ի ծերակուտին :

16. Ակնարկէ գարձեալ ի դարն ոսկի՝ յորում համարէր դից ընակել ընդ մարդկան . արդ ի դառնալ այնր դարու՝ ընակակից ասէ լինել դից զմանուկն և զհայր նորա և զիշխանս հասարակապետութեան :

20. Նարդոս վայրի (Baccar) համարէր դեղ ընդդէմ ակնհարութեան կամ յաշաղանաց, զոր յաւելու ի պատսպարան գեղս մանկան . իսկ զբաղեղն ի զարդ հանդերձելոյ քերթողին: Տես է ԾԱՂԿ. է. 27. 28: Նոյնպէս և կասիմոն և ականթ են ի զարդ պատկանաւորք :

55. Տիփեաւ իմա զնաւապետու, Արդոնաւաւ զնաւս, Տրովադաւ զքաղաքու, և Արիլեաւ զոր և է այր քաջ. որովք նշանակէ զպատերազմունս և զշահավաճառ :

40 Զի յառաջ քան զՀնարս դրամոց վաճառ ընդ վաճառ փոխանակելով առնեին տուրեառք :

47 Զառիկ (sandyx) ծաղիկ քըքմատեւսակի :

49 Պարկայք երեքին քորք առասպես լւալք, յորոց մին ունի զաղեկատ, միւսն զիւ մանելով զթել կենաց մարդկան, և երրորդն զմիրատն մահառիթ՝ որով հատանէ զայն :

59 Կալիսպէ մին յինունց Մուսայից, մայր Որփէի, դիւցազնական տաղից խընամակալ :

60. Պան. Տես է ԾԱՂԿ. Բ. 55:

61. Իմաստըն են. ի զուարթ երեսաց և ի ժամանելոյ ծնողաց քոց սկսիր ճանաչել զնոսա . զի ոչ բարեաց ասէ զուշակ, եթէ ոչ զուարթ հայեսցին ծնօդք ի մանուկն . որպէս Արամազդ և Յունոն զի ոչ զուարթ հայեցան ի Հեփեստոս վասն տղեզութեանն, ընկեցիկ եղել ի Ամենոս և կաշացաւ :

62 Իմա տասներորդ ամիս լուսնի, կամ սկիզբն տասներորդի արեգակնային ամսոյ :

65. Այսինքն ոչ կենակից լիցի դից, և ոչ ամուսնանալոյ ընդ ումեք ի դիցուհեաց լիցի արժանի :

ՆԱԴԿԱՔԱՂ ՀԻՆԳԵՐՈՐԴ

~~~~~

ԴԱՓՆԻ

Հովիսք երկու զդամբանական հանդէս  
Դափնեայ սիրելոյ խրեանց և զդասիլ  
նորա ընդ դիս նուագէն. Մոփսոսի զդո-  
վութիւնս նորա և զարծանագիր շիրմին  
երգեալ, իսկ Մենալկայ զաստուածարել  
նորա: Թիէ ն արդեօք Դափնիս այս լեալ,  
կամ զոյր ուրուք զգէմն բերիցէ, յոլովք  
են գուշակութիւնք. բայց ըստ հաւաս-  
տագոյն կարծեաց այլաբանէ երգս այս  
զՅուլիոսի կայսեր զմահ, և զդիւցական  
ընդունելնորա պատիւ: Յերեւս ի հան-  
դէս խաղուց ինչ կամ զոհից, որ ի պա-  
տիւ նորա կատարէին, յօրինեալ իցէ  
զայս քերթողիս:

ՄԵՆԱԼԿԱՍՍ ԵԽ ՄՈՓՍՈՍ

Մենալկաս

Քաջահըմուտք երկաքանչիւր դի-  
պեալք, Մոփսէ, ի միասին,  
Դու ի ծըզօտ փըզել թեթէւ, իսկ  
ես ի տաղըս մըրմընջէլ,

Հիմ ոչ բազմիմք աստ ի միջի ար-  
քակաղնեաց եւ նըշդարեաց :

### Մոխոս

Երեցագոյն ես դու, Մեհալկ. ինձ  
քեզ ի ճահ է հնազանգել,  
Թէսլէտ աստ՝ ուր ըզողովողդ շար-  
ժեն զեփիւռք ըզհովանիս,  
Եւ թէսլէտ կամք ի քարայրիդ իցեն  
բազմել. տես իբր ահա  
Որթ վայրենի սրբուէ ոզկոյզս ըզքա-  
րայրիւըդ ցան եւ ցիր :

### Մեհալկաս

Ամինտաս եւեթ ընդ քեզ գոյ ի լւ-  
րինս աստ մըրցակից :

### Մոխոս

Չի՞նչ զարմանք, զի եւ ֆերեայ իսկ  
նա յաղթել փորձի տաղթւք.

### Մեհալկաս

Ըսկըսիր դու նախ, Մոխոս, թէ  
զատրվանսաց ինչ ըզփիլեայ 40

Եւ թէ զպովից Ալկոնի, կամ թէ  
Ղկոգրեայ ունիցիս վէճ. Ա  
Ըսկըսիր, Ճարտկաւոր այծեացն ի  
պահ կացցէ Տիտիր :

### Մոխոս

Զոր արդ իսկ ի դալար կեղեւ փիճ-  
ւոյն գըծեցի տաղ՝  
Երդ ընդ մէջ քանդակելով, զայն  
մանաւանդ աւից ի փորձ,  
Դու հրաման ի հանդէս մատչել ա-  
պա տուր Ամինտայ :

### Մեհալկաս

Որչափ Ճապուկ ուռիս ստորեւ քան  
ըզգունատ է ձիթենի,  
Քան ըզվարդ կամրերփեան որչափ  
օշնան անփառունակ,  
Այնչափ ի վայր քան ըզքեղ Ամինտ  
ի մերս է յատենի :

### Մոխոս

Այլ դադարեա յերգոյդ, մանուկ  
դու, ի քարայրն ահա հասաք :

Աղքային զանկեալն անդութ մահու  
զԴափնի յաւերժհարսունք . 20  
Վըկայք յաւերժհարսանցն էք դուք  
ողբոց , դետք եւ կաղնիք ,  
Յորժամ մայրըն զողորմ գիտին որ-  
դոյն ողջագուրեալ , 22  
Եւ առ դիս եւ առ աստեղս անտ-  
դորոյնըս բողոքէր :  
Ոչ զեղինս ոք յարօտոյ ի ցըրտա-  
գին գետ , ովլ Դափնի , 24  
Ած յաւուրն յայնոսիլ , եւ ոչ զա-  
լեաց չորքոտանի  
Առ ըզջաշակ , եւ ոչ ի դեղ դալար  
մատոյց շուրթն ի ճարակ .  
Զառիւծուց իսկ հեծեծել տիրի-  
կեցւոց ընդ քոյդ կորուստ 27  
Վըկայէն , ովլ Դափնի , տմայաբնակ  
լըրինք ու անտառք :  
Ծզվագէրս արամեանս ուսոյց Դափ-  
նի ըծել ի կառս , 29  
Դափնի եւ զալար օրհներգուաց Դի-  
ոնխեայ ածել ի սպաս ,  
Եւ մօրչ սաղարթիւք ըզճօճ զեղար-  
դըն սպատատել :  
Իբր որթ ծառասաանին , վերդ ոլ-  
կուզակք որթոյ ի շուք ,

Իբր անդէոց ցուլ , զինչ որայք քաջ-  
բերունի անդաստանաց ,  
Դու բոլորովին քոյոցըդ գեղ վայել-  
չութեան :  
Խնքն իսկ , յորմէհետէ Ճակատա-  
գիրք առին ըզքեղ ,  
Ելիք Պալէս զարտորայս , ելիք եւ  
ինքն իսկ Ասոլոն . 56  
Ճակօսս անդ , յորըս դարի աւան-  
գեցաք ատոքահատ , 57  
Որոմընչարաշուք ծնանի յաճախն եւ  
ստերջ վարսակ .  
Ծզգիրդ մանուշակ եւ ըզնարկիս ծի-  
րաներփեան  
Ոքող փոխանակեալ եւ ստուարա-  
փուշ յառնէ զըժնիկ :  
Սըփուեցէք սաղարթս յերկիր , ա-  
ծէք զաղքերքըդ հովանի .  
Զայսոսիկ , ո՛ հովիւք , Դափնի ի  
սպաս իւր տայ հրաման .  
Ծիրիմ կանդնեցէք , տաղ ըզգիրմա-  
ւըն դրոշմեցէք .  
Որ ի ՄՍՅՐԻՍ ՍԱՏՍՈՒՑ ՄԻՆՉԵԿ  
ՑԱՍՏԵՂՍ ԱՆԴՐ ՀՅՈՒՉԱԿԵԱԼ  
ԳԵՂԱԽՈՅ ՀՈՎԻԻ ՀՕՏԻ ԳԵՂԵՑԿԱ-  
ԳՈՅՆ ԴՆԻՄ ԱՍՏ ԴԱՓՆԻ :

Մենաշխառ

Մեղ տաղ քսյին է այնալիսի ինչ, ով  
քերթողագ դիւցական,  
Որպիսի նինջ ի գալարող վաստա-  
կաբեկ պարտապելոյ,  
Քըր ի տօթի ի բոյժ պատրոյ վըտա-  
կաբուզն քաղցրիկ ալի,  
Ոչ ի սըրինդ եւեթ, այլ յերդ իսկ  
դուգամիալ վարժապետիդ,  
Մանուկ բարեբաստիկ, դու զհետ  
նորին կացիս ի դաս:  
Խոկ մեք փոխանակաւ ըզմերըս զայս  
իբր եւ է երդ  
Նըւագեցուք, անդր ի յաստեզս  
ըզբոյդ ի վեր ածել Դափնի,  
Ըզդափնի յաստեզս ածել, զի եւ  
ըզմեղ սիրեաց Դափնի: 55

Մովսես

Եւ զինչ վեհագոյն կայցէ նըւեր  
մեղ քան ըզդոյն,  
Կոքնին իսկ պատանին արժանաւոր  
եկաց. երդոց.

Եւ վաղ ըզբոյսըդ զայդոսիկ գո-  
վեաց մեղ տաղս Ըստիմիկոն:

Մենաշխառ

Լուսափայլ յառեալ Դափնի ընդ  
նորահրաշ սեամս Ոլիմպեայ, 57  
Զամզս ընդ սոխւք նըշմարէ եւ ըլ-  
կամարն աստեղազարդ.  
Համար խայտան զըւարթագին ան-  
տառք եւ չենք առ հասարակ,  
Եւ Պան եւ Հովիւք եւ օրիորդք յա-  
ւերդհարսունք:  
Ոչ գայլ հօմին դարանակալ, ոչ  
վարմք նիւթեն երկերուաց դաւ.  
Հաճոյ հեղոյն է Դափնիայ խաղա-  
զութիւն. խրախոյս լերինք  
Բաանան յաստեզս անդր ամայիք,  
Նըւագսանատառք իսկ յօրինեն,  
Կուագեն եւ ժայռաք՝ զի է աստուած,  
ով Մենալկաս, աստուած է նա: 64  
Եր հաշո ընդ քսյս, լեր բարերար,  
ահա քառեակ կանդնեալ բագինք,  
Երկոքին քեզ, ով Դափնի, եւ եր-  
կոքին սեղանք ֆերեայ:

Բաժակ կըրկին ամի ամի դալար  
կաթամբ քեզ փըրփրագէզ,  
Եւ խոռնարանըս կըրկինակ ածից ի  
նուեր պարարտ ձիթոյ.  
Յաճախեցից մանաւանդ խրախունս  
առատ անապակաւ,  
Ի ձմերայնի առ հըրով, իսկ եթէ  
հունձք՝ ի հովանով,  
Կեկարըզմոյլելի հեղեալ բաժակս  
արուխական։ 71  
Լիկաեանն ինձ Եգոն եւ Դամետաս  
առցեն նըւագս, 72  
Ի հանդէս Ալփեսիրէ զվարդապաւ  
յիցն ածցէ զկաքաւ։ 73  
Այսոքիկ հարցին ըստապք քեզ  
միշտ, թէ ուխալս տարեկանս  
Յաւէրժհարսանց հատուցուք, եւ  
թէ զանդովք ի գալն ի շուրջ։  
Յորչափ ըզծագ լերին վարազ, եւ  
ձուկին ըզգեացորչափ սիրէ,  
Մինչեւ մեզուք ի ծոթոր, մինչեւ  
տածին Շըպտունք ի ցօղ,  
Կացցէ անուն քո եւ փառք, մնաս  
ցեն յաւէրժ քո զըրուատիք։  
Հանգոյն Դիսնիսի, հանգունակ դի  
ցըն Դեմետրեայ, 79

Քեզ ուխալս մըշտկէ ամի ամի նը  
ւիրեսցեն։  
Եւ դու զնոսա արացես ի լըումն  
ուխտիցըն պարտապան։

### Մոխտու

Եւ զինչ ընդ այդպիսւոյ տաղիդ  
քեզ զինչ տաց մըրցանակ։  
Ոչ հընչեն գարնանաբեր ինձ հա-  
րաւոյ այնքան ախորժ,  
Ոչ այնպէս ծովափունք ի յերա-  
դարձ ալեաց կոծեալ,  
Եւ ոչ ընդ ձորըս քարախիտս ըն-  
թացք գետոց կարկաջահոս։

### Մենաշիաս

Ըզդիւրաբեկ զայս ծըլօտ տացուք  
ի նուեր քեզ նախընծայ,  
Սա մեզ « զԱլեքս չը քնազտիկ սի-  
րէր հովիւըն կորիգոն »։  
Սա ինքն ուսոյց նըւագել « Ոյր են  
խաչնիքը, Մելիքեայ »։

## Մահսու

Խակ դու ըղցուազս առ ընկալ, զոր  
ստէպ խընդրեալ Անտիգենեայ,  
թէ եւ սիրոյ խակնա յայնժամ գոյր  
արժանի՝ ոչ ընկալու,  
Ըզգեղդեղեան ի պըզինձ հանդէտ  
ծընդուլք, ու Մենալկաս։ 91

ԾԱՆ 0 ԹՈՒԹԻՒՆՔ

40. Փիւլէս դուստր Լիկուրդեայ արքա-  
յին թրակացւոց, որոյ տարիացեալ  
Դիմավոնի որդուայ Ծեսէսոսի արքային  
աթենացւոց Հիւրընկալեաց զնա ի  
դառնալ նորա ի պատերազմէն Տրո-  
վադայ : Բայց ի դնալ նորա անդրէն  
յլ թէնս առ ի յանձնանձել զիրս թա-  
գաւորութեանն, և ի յամելանդընդ-  
դէմ խոստմանն, յուսահատեալ Փիլ-  
լիս և համարեալ զանձն լքեալ ի նը-  
մանէ, ի խեղդ մտարերեաց :
41. Ալքոն աղեղնաւոր անուանի կրետա-  
ցի, որ այնու ճարտարութիւն ձկեաց  
զնետ յօձ պատատեալ զմարմնով  
որդուոյ իւրոյ Փաղերեայ, զի սպան  
զսողունն առանց երգիծանելոյ նե-  
տին յորդեակն :

Առդրոս արքայ աթենացւոց ի դիւ-  
մելն ի պատերազմ՝ ընկալաւ պատ-  
գամ ի դից, զի ազգ՝ որոյ կոբիցէ  
թագաւոր՝ յաղթող գացի : Վասն ու-  
րոյ և թշնամիք հրովարտակ արարին՝  
մի ուժեք մեղանչել արքային աթե-  
նացւոց : Խակ ինքն ի մայրեւորի կեր-  
պարանս գրգռեալ ընդ ոմանս ի թըլ-  
նամեաց, սպանաւ ի նոցանէ . և իրեւ-  
ծանեան զնա թշնամիք՝ զի եր ար-  
քայն աթենացւոց, գարձան յետս  
պարտեալք սննպատերազմ:

20. Ակնարկէ ի մահ Յուլիոսի կեսարու,  
որ յատենի ծերակուտին ի հարուած  
քսաներից սուսերաց անկաւ խող-  
խողեալ :
22. Մայրնորա իմա զ Հռոովմ, որ զդիակն  
նորին ի հրապարակի մեծաւ ամբո-  
խիւ և ոզբակցութեամբ ամենեցուն  
այրեաց ի խարուկի :
24. Ակնարկէ յանցո՝ որ ի Առեւտոնեայ  
պատմին նախ քան զմահ կեսարու  
դիպեալ :
27. Բերրի առիւծուց և հրէշից Ամբի-  
կէ, ուր կեսար պարտեաց զկատոն,  
զԱկիպինն և զ Յորաս :
29. Քանզի Յուլիոս կեսար պայծառա-  
ցոց ի Հռովմ զպաշտօն Ապանդարա-  
մետական դից, զորոյ զպատկեր բար-  
ձեալ ի կառա ձգէին վագերք, և աս-  
տուածապարարկը զնային առաջի,  
ճօճելով ի ձեռին տէգս կարճարունս  
պատեալս ուսուք և քաղեղամիւ:

56. Պալես դիք հովուաց և արօտից . իսկ  
Արթուրն աստ յիշի իբր արօտական ,  
որ զնաշնոս Աղմետաց արքայի երեմն  
արածէր , Հալածեալ յերկնից ի Դիո-  
սէ վասն սպանաննեցյ իւրոյ զկիկլո-  
պայս գարբնողս շանթից նորա :
57. Գրաբէ իմա զցորեան և զամենայն  
արժոտի , ի տեսակէ զսեան :
58. Միւնալիս զդէմս Վիրգիլեայ բերէ ,  
որպէս յայտ է ի յետին տողից եր-  
դոյս՝ Ստ Խո զԱլիքու լըդնաղնիդէոլ  
և այն . և քանզի սիրելիք եղեն կե-  
սարու մանտուացիք , վասն այն ասէ .  
Զի և ըստու սիրելոց Դիոֆնի :
59. Ուշմարու կոչին լերինք երկոտասան ,  
յորոց գլխաւոր է ի կողմն Թեսաղիոյ՝  
որ թեակոխէ ի Մակեդոնիա . և է  
բարձր յոյժ , մինչեւ գագաթան նորա  
յամպս ծրաբել . վասն որոյ և քեր-  
թողք փոխանակ երկնից առնուն  
զայն :
60. Քանզի Յուլիոս Կեսար ի կարգս դից  
գասեցաւ վճռով եռապետաց աս-  
տուածարեալ . և յայնմէնտէ Ոկտա-  
վիանոս աստուածորդի անուանեցաւ :
71. Արտուր Հրուանդան է ի Փիոս կըդ-  
զւո՞յ յեպեան ծովու , որ բերէ զինի  
աղնիւ . իսկ նէլիքար է աստուածըմ-  
պելի կամ անմահական ըստ յունին  
բաժակ :
72. Լիկուտան , ոյսինքն կրետացի . քանզի  
Լիկոսս քաղաք է ի Կրետէ :
73. Ալէիսիբէ , անուն հովուի . իսկ կար-

- դապայց են Սատիրայք կամ Պայք  
նոխագոտունք , այսինքն դիք շինա-  
կանք մարդագէմք եղներաւորք՝ ի մի-  
ջոյ և ի վայր այծակերպէք : Ծերա-  
գոյնք ի նոցանէ կոչէին Սիլենայք ,  
որպէս Սիլենոս դաստիարակ Դիո-  
նիսի , որոյ յաւանսակն ընդ համաս-  
տեղս կարգեցաւ :
79. Դիօնիսոս նոյն ընդ Բաքոսի . իսկ Դի-  
ուրէ խնամակալ արմուեաց և մշա-  
կութեան՝ որոց ինքն առաւելապէս  
եղեւ Հնարագէտ . և էր նա գուստը  
կրովնեայ , և մայր Պրոսերպինեայ ,  
յորոյ ի խնդիր տաժանեալ յածէր  
ընդ երկիր՝ ի յափիրշտակելն զնա Պլու-  
տոնի :
91. Սոյսինքն զցուալն հովուական , աղնձի  
զարդուք դրուագեալ , և Հաւասար  
անջրպետիք ի միմեանց ծնդակապ :
-



Սիլենոս զսկիզմն համագոյից խառն  
ընդառասպելս պատմէ պատանեացն Քրո-  
մեայ և Մնասիլեայ ըստ եպիկուրեան ա-  
ղանգոյն վարդապետութեն : Սիլենոս ասու  
զՍիրոնի եպիկուրեան իմաստասիրի բերէ  
զդէմս, իսկ Քրոմիս և Մնասիլ զՎիրդի-  
լեայ և զՎարոսի աշակերտելոց Սիրոնի ի  
վարժու իմաստասիրականին այնորիկ ա-  
ղանգոյ : Եւ է Վարոսս այս ըստ հաւանա-  
կանագոյն կարծեաց կունտափիլիոսն վա-  
րոսս, որ ի բարձր աւագութիւնս առ ինք-  
նակալութեամբն Աւգոստեայ ամբար-  
ձաւ . և երիւք լեզենօքի Գերմանիա ար-  
ձակեալ, ի կորուսանելն զնոսա դաւով  
Արմինիոսի՝ առ վշտին չոքաւ զիւրովն :

---

Սիրակուսեան տաղեց ի խաղ նախ  
ինքըն մերըս թաղիա և  
ոչ գըժապատէհ վարկաւ զբօնուլ,  
եւ ոչ ամօթ բնակել յանտառա :

Զաբրայից եւ զՃակասուց մարտի  
մինչ երգս յօրինէի, 5  
Կինթեանն ինձ Ապոլոն՝ ձըգելով  
զունկն իմ՝ աղդ արար. 4  
Հովուի զպարարակ խաշինս արժան  
է արածել,  
Հովուի բարակաման ոլորելտաղս,  
ով Տիտիրէ:  
Ըզգեզջայինն արդ ըլլլուսա յել  
յեղեցից ես նուրբ ի ծզօտ.  
Զի իցեն իսկ յոլովք՝ որ զըլըռուա-  
տիս քո, ով Վարէ, 8  
Հըռչակել ցանկանայցեն եւ զդուս  
ի յերդ առնուլ դըմնեայս:  
Ոչ ահճրամանս ինչ նըւագեմ. բայց  
թէ երբէք ոք ի սոսին 40  
Եթէ իցէ ոք որ սոցին հարեալ սի-  
րովակնարկիցէ,  
Ըզքեզ մոշկը մեր նըմա ըզքեզ ահ-  
տառք առ հասարակ  
Նըւագեսցեն, ով Վարէ. չիք ինչ  
Փերեայ հաճոյագոյն  
Քան որ յինքեան ըզլարեայ վեր-  
բերէ էջ դրոշմեալ զանուն:  
Օ՛ն ապա Պիերեանք: Անկեալ ըլ-  
քնով ի քարայրի 45

Քրոմիս եւ Մհամիլ տեսին ման-  
կունք ըզլիլենոս: 16  
Երեկորի քաղցուով երակը իւր որ-  
ուէս միշարն ոււռուցիկը.  
Բայց միայն սահեալ պըսակը ի ճա-  
կատուէն կային ի բաց,  
Եւ ծանրակիրն ըմնանակ ի կախ  
ըզմաշ կայր զունկանէն:  
Յարձակին, Եւ զնա նովին պըսա-  
կօք շուրջ պարաւանդէն:  
Զի յաճախ ի յայս տաղից պատ-  
րեալ ծերոյն էր վերկոսեան:  
Գումարեալ ընդ նոսին վէհերոտիցն  
ի զօրաւիգն  
Եհաս Եգլէ, Եգլէ ի պարս յա-  
ւերժարսանց ըզնալագեղ. 23  
Եւ յաչացն ի բանալ՝ Եգլէ ի թութ  
արիւներանգ. 24  
Ըզքունըս նորին եւ ըզՃական առ  
երգունել:  
Կորա ընդ նենգըն ժըպտեալ ասէ.  
Ծնդէր կաշկանդէք զիս,  
Լուծէք աղէ, ով մանկունք, շատ  
տեսանելըդ զիս լիցի:  
Տաղս յինէն պահանջէք, ընկալա-  
րուք. տաղք ահա ձեղ,

ԱՅԼ ինչ սըմա տացի վարձ : Եւ  
սկիզբն անդէն արար երգոյն .  
Պայք եւ պարիկք անդ եւ գաղանք  
ի ներդաշնակ խաղային պար ,  
Եւ կտղնիք ըզգագաթունսըն կարծ .  
րապինդք տատանէին :  
Ու այնպէս բերկրին Փերեաւ սարք  
պարհասեան , եւ ոչ խմար 52  
Այնպիսի եւ Հոռոոոպէ ընդ Որփէոս  
կայ հիացեալ : 53  
Քանզի նուագէր իբր ընդ անհուն  
ունայն ի մի հասեալ վայր  
Երկրի սերմանք եւ այսոյ , ծովու  
համայն եւ լոյծ հըրոյ , 54  
Եւ իբրի տարեց անտի նախէք առ  
հասարակ ,  
Եւ ինքն խակ նորաստեղծ ոլորտ եր  
կրի շարակայեալ ,  
Անդ գետին տրամանալ եւ ի յան .  
դունդս ըզներէոս 58  
Առնոյր վանել , տակաւ ի յարդ ա .  
ծեալ էից ու ի կերպարան .  
Իբր ապա ընդ արփին նորանըշըլ  
պակեաւ երկիր ,  
Եւ տարափք ի բարձրաբերձ ամսոց  
յուղեալ անկանէին .

Անդ ըսկիզբն անտառաց առեալ  
յառնել , եւ երէոց  
Համասփիւռ ընդ անծանօթ Ելրինըս  
թափ առեալ ըրըշել :  
Յայնժամ զարկեալ վէմս ի Պիրըայ  
եւ ըզկրովնեանն արքայութի , 44  
Ըզգողնսըն Պրոմեթեայ եւ զկով .  
կաթեան վիպէ ըզհաւա : 45  
Յաւելու եւ առ որով աղբերը նա .  
ւորդք ըզկորըստեայն  
Զայնեալ Հիլաս , եւ իբր ողջոյն հըն .  
չէր ծովափն Հիլաս Հիլաս : 47  
Զիւնափայլ երընջոյն զհարեան ի  
սէր Պատիսիայէ 48  
Ապա սփոփէ , զերջանիկն եթէ եր .  
բէք չէր լեալնախիր .  
Իբր , աւազ , հէք օրիորդ , ի շամբ .  
շութիւնդ յայդ մատնեցար .  
Լըցին Պրետեայ դըստերը ըզգաշտս  
ի կեղծ ի կեղծ իւրեանց բառաց , 51  
ԱՅԼ ոչ ի ժանա ուրուք ի խաւնըս  
պաճարին մըտաբերեալ ,  
Թէսլէտ եւ զըուծ արօրաձիդ յու .  
լանն ըստէպ կասկածելով ,  
Եւ զեղջերս յողորկատարը ի Ճա .  
կատուն հետազօտէր :

Աւաղ, հեք օրիորդ, դու ի լերինս  
արդ թափառիս,  
Կա ի քընքուշ յակինթ զիրանիըն  
ձիւնաթոյը ընկողմաննեալ,  
Նըսեմատուեր ընդ սըզոցեաւ ըզ-  
դեղնաշորթ սէղն օրոճայ, 57  
Կամ ի նախրի անդ ի մեծի մատա-  
կախանձ հետամըտէ:  
Փակեցէք յուէրժարսունք ըզալն  
կախիստ արդ անտառաց, 59  
Ամբափակս արարէք յաւէրժար-  
սունք գիկաէուհիք, 60  
Զի հետք ցըլուն թերեւս ի յաչըս  
մեր անկցին թափառականք,  
Զի մի գուցէ զհետ անդէոց եւ կամ  
ի գոմըս գորտինեանս 62  
Կանաչագեղ գալարւոյն արկցեն ի  
սէր ըզնա արջառք:  
Յերեկորնեայմն ի խընձորս ապա  
զաղթիկն երգէ յաւեալ, 64  
Դառնակեղեւ մամուապատ զփայե-  
տոնիկս ապա զդըստերս 65  
Ամբառնայ ի յերկրէ եւ բարձրա-  
բերձ կանգնէ բարտիս:  
Յայնժամ երգէ ըզդալոս, իբր յա-  
ւանեան ած ի լերինս 67

Մին ի քերց ըզթափառեալն առ գե-  
տեզերըն Պերմեսեայ,  
Եւ իբր յոտին նըմա յարեաւ եկաց  
փերեան սպարն համօրէն.  
Ի՞բր հովեւըն Լինոս ի դիւցական  
նըմա ի տաղ, 70  
Ծաղկունս ըզվարսիւքն եւ կըծուա-  
համ ածեալ նեխուըր, 71  
Ասէր, Զայսոսիկ քեզ եղեգունըս  
տան Մուսայք,  
Առ ընկալ, զորս ասկրեցւոյ վաղ  
խակ աըւեալէր ծերունւոյն. 73  
Որովք նայն ի նուագելն իւրում սո-  
վոր էր ի լերանց  
Վայրաբերել ի հրաւէր ըզկարծրա-  
տորըր քարհացիս.  
Սպիտք ըզգրինեան առ զանտառին  
դու սկիզբն ի յերգ, 76  
Զի մի ուրեք գերապանծ ֆեբեայ  
քան զայն կացցէ գաբիլ:  
Զինչ ըզնիսեանն Ըսկիլլայ տոկց  
ոգել, զորմէ զըրոյցք 78  
Ի հրէշ ընդվայրահաջ փայլուն բար-  
ձիւքըն կերպաւոր  
Համբաւէն ըզլաստափայտուըն դու-  
լիքանս ալէկոծեալ,

Եւ ի խորս անդընդոց զերկըստին,  
աւամղ, ըգնաւաստին  
Յօցյօշ կելքէքալ ի ժանիս շանցըն  
ծովայնոց.  
Կամ զիարդ զայլակերպիկըն Տերէի  
վիպեալ իրան, 83  
Որ ինչ խորտիկ ջամբեալ նըմին Փի  
լոմելայ, որ ինչ նըւէքս.  
Ի՞ր արագ սլացեալ յանչէն, եւ  
որպիսի նա թեւս առեալ  
չէքն ըզյարկօք ըզլաղ ուրեմըն իւ-  
րայնովք հոլաթեւէք:  
Եւ բնաւ որ ինչ Փիքեայ երբեմն  
յեզէվելով՝ լըւաւ Եւրոս, 87  
Եւ հրաման սարդենեաց ետ ուսա-  
նել, երգեր Սիլեն:  
Հովիտք ըզնոյն երգակիցք յաստեղս  
ի վեր ածեն գեղգեղ,  
Մինչեւ դիշերալարն ընդ դըմկա-  
մակին Ոլլմու Ճեմեալ, 90  
Ի գոմս ըզխան հարկեցոյց ածել՝  
արկեալ զայն ի համար:

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆՔ

- Թառլէտ մի յինունց Առևսայիցն, վե-  
րակացու կատակերգութեան և թա-  
տերախաղից. և են իմաստք տողիս.  
Նախկին ի լատինաց ոչ գժպատեհ  
վարկայ գրել տողս հովուականս բառ  
օրինակի սիրակուսեցւոյն թէոկրի-  
տեայ:
- Ասի սկսեալ նախ Վիրդիլեայ եր-  
գել զթագտորս ալբայիցիս, և ա-  
պա թողեալ զայն և ձեռնարկեալ  
ի տաղս հովուականս:
- Լիննեան կոչին Ապոլոն և Արտեմիս,  
Երկոքին ևս ծնեալ ի Դելոս կըդ-  
զո՞յ ուր է լեառն կինթոս: Իսկ  
ձգել զունկն յուշի կապելոյ վասն  
է զիգրատն: Աստանօր Վիրդիլ Տե-  
տիրոս զանձն անուանէ:
- Վարոսս այս այլ և այլ ոք կարծի ի  
մեկնչաց, այլ հաւանագոյն թուիլեալ  
Պ. կունատիլիսս Վարոս, մեծամեծա-  
ւագութեանց յաւուրս Աւգուստայ  
ինքնակալի հասեաւ. քանզինախ ըլը-  
դեաշխ ի Հռովմեկաց, ապա կուսա-  
կալ յԱսորիս, և ապա երիւք լեգեո-  
նոր ի Գերմանիա գիմեալ, և յԱրմի-  
նեայ զօրավարէ գաւով պաշարեալ  
ահագին կոտորածիւ կորցոյ զզօրմն,  
մինչեւ առ յուսահատութեան եր-  
ալ զիւրովին:

10. Իմաստք տողիցս են. թէպէտ և երկեցոյց զիս Ապոլոն նկարագրել յերգս գիւցազնականս զըռարութիւնս, սակայն և զհօվուականս իմ զայսոսիկ տաղս եթէ ոք ընթեռանուցու, գոցէ ամենայն ուրեք յանտառս մերև և յանդեայս զանուն քոյին . զոր յաճախեմ յիշատակել, գիտելով զի չիք Ապոլոնի հաճոյագոյն ինչ քան ըդքերթուածո՞ որ զանուն քո բերից ցեն : Սոյնպէս և ի ծաղկաբաղն թի. ստէլյիշատակէ զնոյն ինքն զՎարոս :
15. Պիերէտան+ . տես ի Ծաղկ . Գ . 87 :
16. Քրայն և Մնուսէ մարդաւպայք պատասիք . իսկ զԱսէնայ դեռ է Ծաղկ խուաղ . Ե . 75 :
20. Երէկ մի ի յաւէրժհարսանցն նայատից, դուսար նէերայ և արեգական:
24. Քանզի թթենիք սպիտակս միշտ յառաջագոյն ըստ առասպելաց պտղաբերէին, և ապա յարենէ Պիրամեայ և Թիորեայ եղեն թութք բօսորատիպք : Ովիդ . այլակերպ . Գ . 54 :
32. Պարաստ լեառն ի Փովլիս , մերձ ի կիթերոն և յԵլիկոն , կրկնակ գագաթամբք սարաւանդեալ, յորոց մին կոչի նիսա՝ նուիրեալ Պիոնիսի , և միւսն կիրար սրբազնեալ Ապոլոնի և Մուսայից :
55. Հռոդոսէ լեառն ի Թիրակիա , միշտ ձիւնախաղաղ , որ ձգի ի ծավակողին կոյս յեւբանեանն Պօնտոս , և անտի ըղինէ Երրոս դետ : իսկ իսմոր

- միւս այլ լեառն ի ծովեզերեայ գաւառ . Թիրակիոյ , ոչ ինչ հեռի ի բերանոյ Երրոսի : Յայսոսիկ կողմանս յածեալ չրջէր Որփեոս :
54. Եպիկուրոս երկուս սկզբունս համագոյից դնէր , գդատարկութիւն և ըդլութիւն . զի որ ինչ էն՝ կամ բովանդակի և է լիութիւն , և կամ բովանդակէ և է դատարկութիւն : Դատարկութիւն կոչէր զվայրն համատարածունայն ի նիւթոց . և լիութիւն զիիւլեայս կամ զնիւթն մանրամաղ , որ ընու համօրէն զվայրն զայն դատարկ . զորս Այրգիլիոս սէրմանս կոչէ աստ , յորոց ընդի իրեարս պատահելոյ գոյացան ըստնմին աղանդոյ չորեքին տարերքն հուր , ջուր , երկիր , և օդք՝ զորոյս անուանէ . և ապա ի բաղադրութենէ տարերցոս եղեն երկինք , արեգակն , կենդանիք . և այլն ամենայն :
58. Ներեսոս որդի Ովկիանու և Տէկեայ , հայր յաւէրժհարսանցն ներեայց . աստ առեալ է փոխանակ ծովու կամ ջուրց :
64. Պիբրա կին Դեւկալիոնի արբային թեսազացոց , առ որով ջրհեղեղն ուստի երկոքին ևեթ սորա ասպիւցան . անկեալ նաւու ի Պարնաս՝ որ միայն ի լերանց չէր ծածկեալ ի ջուրց : իսկ ի դադարել ջրհեղեղին հարցին զքուրմն թնեմեայ մօր Աստրէայ զիցու հւոյն վասն սերելոյ անդրէն աղգի մարդկան . և նա ետ

պատգամ, ընկենուլ յետս կոյս զոս  
կերս մայրենիս : Խելամուտ եղե  
Դեւկալիոն խմատից բանին՝ զի ոս-  
կերս մայրենիս կօչէր զքարինս եր-  
կրի մօրն հասարակաց . և ի կատարել  
նոցա զսատուէր քրմին , քարինք ի  
նմանէ ընկեցեալք՝ փոխեցան յարս,  
իսկ որ ի կնոջէն ընկեցեալք՝ փոխե-  
ցան ի կանայս :

Զիրովնեան աբքայութենէ պէս է  
ծառէ . դ . 6 :

45. Պրոմեթեոս մի ի Տիտանանց , հայր  
Դիեւկալիոնի , որ անդրիս ի կաւոյ  
ստեղծ , և հուր յերկնից գողացեալ  
կենդանացոյց նովաւ զանդրիսն : Ծնդ  
որ ցասուցեալ Դիսոսի , ետ Հեփեա-  
տեայ կապել զնա ի կովկաս լերին ,  
և անդեղ զլեարդ նորա ճարակել . և  
լերդոյն հանապազօր աճելով , մշտըն-  
ջնաւոր կրել նմա զտանջանսն :

Կովկաս լեառն Ասիոյ , ընդ մէջ  
եւքսինեան և կատպեան ծովուց :

47. Հելաս մանուկ սիրելի Հերակլեայ և  
ուղեկից նորա յարշաւանին ընդ Ար-  
դոնաւորդս . սա իջեալ ի նաւէն եր-  
թալ զջրոյ , և խոնարհեալ յաղ-  
բիւրն , ի ծանրութենէ սափորոյն ան-  
կաւ յալիս անդ խորասոյզ , և յա-  
փըշտակեցաւ ի յաւէրժհարսանց՝ որ-  
պէս առասպելեն : Զոր ընդունայն ա-  
պա կոչէին յանուանէ Հերակլէս և  
Արգոնաւորդք . վասն որոյ սահմա-  
նեցան ի տեղւոջ անդ տօնք , յորում

այսր անդր ընթացիւք սատէալ կոչէին  
զնիւաս մանուկ : Զաղբիւրա զայս և  
զլիճ համանուն մանկանն Հիլասայ՝  
համարի Սոլինոս ի Բիւթանիա ի քա-  
ղաքն Պրուսա :

48. Պատուի գույշ դուստր արեգական , կին  
Մինովայ արբային կրետացւոց . որ  
հարեալի սէր ցլու ծնաւ ի նմանէ ըստ  
առասպելաց զՄինոտաւրոս մարդ  
ցլախառն :

51. Պատերք Պրետեայ արբային ար-  
դիւցւոց հաւասարել գեղսին Հե-  
րայ ամբարհաւածեալ , հարան ի նը-  
մանէ ի գաղանային կատազութիւն՝  
արջառս զանձինս կարծելով , վասն  
որոյ կեղծիկեղծ գրառաչ նոցա կոչէ-  
քերթողն . զի ոչ իսկապէս արջառք  
էին , այլ մնասի երկիւղիւ պատրեալ  
ստէպ ի Ճակատուն իւրեանց եղջերս  
հետազօտէին , և զլուծ յուլան :

57. Դինաւորն կոչէ զիստն որոճացեալ ,  
քանզի ընաւորապէս կորուսանէ զդա-  
լարագեղ կանաչութիւնն ի վերբե-  
րելն անդրէն յետ կլանելոյ և ի կըր-  
կին ճասքելն :

59. Պասիփայեայ է բանս , զօր Ակլենոս  
ի գիմաց նորա առ յաւէրժհարսանս  
բարբառի , և կամ յանձնէ իսկ առ . ի  
սփոփումն նորին : Փակել զանտառս  
իմա պատել զայն ցանցիւք :

60. Դիկրէ լեառն ի կրեաէ , ուրի յայրի  
ուրեք գնատակը մեղուաց սնուցին  
զիլաս ի մանկութեան :

62. Գորդինս աւան ի կրետէ , պարարտ  
արօտիւր :
64. Ակնարկէ յ Ատալանտա դուստր Աքե-  
նէսի արքային Ակիւրայ կղզւոյ յե-  
գեան ծովու , որ զտարփաւորս իւր  
կարդայր յասպարէզ ընթացից , բզ-  
պարտեալս ի մահ մատնել , և ամուս-  
նանալ ընդ յաղթողին : Յաղթեաց  
նմա իսպամենէս արկեալ ընդ աս-  
պարէզն խնձորս ոսկի , և յամեցու-  
ցեալ զօրիսրդն ի ժողովել զայնոսիկի  
ՅԱտղէանէ զինձորսն զայնոսիկ ըն-  
կալեալ էր իսպամենեայ , յերեկոր-  
նեան պարտիզացն քաղեալ , որ զար-  
մանէին Եսպերեայք գստերը երեք  
Եսպերոսի եղբօր Ատլասայ ի Լիքսոս  
աւան Մաւրիսանիոյ . ուր ի պահ  
կայր վիշտապ բազմագլսի ահագին ,  
զոր սպան Հերակլէս առ ի բերել ի  
պտղոց անտի առ Եւրիսթէս ար-  
քայն Միկենաց :
65. Փայէտոնիչ + քորք Փայէտոնի , դըս-  
տերը արնգական . որք առ վշտի կոր-  
ծանման եղբօրն իւրեանց Հայրենի  
կառօքն յ Երիդանոս , այլակերպեալ  
փոխեցան ի բարտիս :
67. Պոլիսս կուռնելիսս Գառլոս , Հայ-  
րենօք ի Փորոյուլեայ , ի նուռասո-  
բախտէ ամբարձեալ ի շնորհս և ի  
մուերմութիւն Ոկտաւիանոսի ինքնա-  
կալի , և բարերարեալ ի նմանէ , սա-  
կայն առկերախտ առ նա դտաւ :  
Վասն որոյ մերժեալ ի նմանէ , և

վճռովվծերակուտին դատապարտեալ  
ի տոյժու և յաքսոր՝ չոդաւ զիւրովին .  
բայց ինքնակալին ելաց զմահ նորա ։  
Ակրելի եղեւ նա բազմաց , մանաւանդ  
Պոլիսինի և Վիրդիլեայ . ասի իսկ  
Վիրդիլեայ ի չօրրորդ գիրս մշակա-  
կանացն զգովութիւնս նորա յեռեալ  
և ապա ի հրամանէ Աւգոստեայ բար-  
ձեալ զայն յետ մահուն Գալլոսի ,  
և զհրաշաղան դրուադ Արիստոսի  
վիպացն ճահագայն ի աեղի փոխա-  
նակեալ : Արդ էր սա ինքն Գալլոս և  
քաջ բանաստեղծ , և արար և թարգ-  
մանեաց քերթուածս , որ ոչ հասին  
առ մեզ : Ի սոյն ակնարկեն յաջորդ  
տողքդ : Աւաննեան Երեխնք են Ելիկոն  
և կիթերոն ի Բիովտիա , որ յառաջն  
կոչէր Աւաննիա յ Աւաննեայ որդւոյ  
Պիսիդոնի՝ որ ի կողմանսն յայնոսիկ  
թագաւորեաց :

Պիերեա գետ անդ ի Բիովտիա , որ  
բղիսէ յ Ելիկոնէ :

Մին ի քերց , այսինքն յիննեցունց  
Մուսացից դատերաց Փերեայ , որոց  
պար համօրէն յառնէ յոտին կայ ի  
պատիք Գալլեայ :

70. Զիինուէ ուն ի Ծաղէ . Դ . 57 :

71. Նեխուռ աղդ բանջարոյ , որով նախո-  
նիք պասկէին զգուապարայաղթ նա-  
հատակս իսթմեան և Նեմեան խա-  
ղուց :

73. Ասէրեցոյ ներսանաոյն , այսինքն Ե-  
սիոդեայ՝ որ յ Ասկլեպայ գեղջէ Բիով-  
տիոյ , որ յաջմէ կայ Ելիկոնի :

76. Գրիգորն աւան յԵւողիս, ուր էր  
մէհեան Ապոլոնի ի սպիսակ կծէ,  
պատգամաեղի հաչակաւոր. զօմանս  
ի պատգամաց անտի ասի թարգմա-  
նեալ Գալլոսի ի լատին տաղս ի քեր-  
թուածոց Եւփորիսնի ուրումն քեր-  
թողի քաղիկսացւոյ: Յորս էր թերեւս  
և նկարագիր սկզբան դրինեան պատ-  
գամատեղւոյն:
78. Կրկն են Սիւլայ+ , մին Նիսեայ մե-  
դարացւոց արքայի դուստր, որ մա-  
հառիթ հասմամբ հերաց հօրն մատ-  
նեաց զնա թշնամոյ նորին Վինո-  
վայ՝ որոյ սիրով վառեալ էր, և պա-  
տուհասեալ փոխեցաւ յարտոյտ: Խոկ  
միւսն Սկիլլա էր դուստր Փորկոսի,  
որ քանզի սիրելի էր Գլաւկեայ՝ մա-  
խանօք կիրկէի փոխեցաւ ի միջոյ ի  
վայր ի կերպ շան. և յարհաւրաց տր-  
գեղութեան ծովամոյն եղեալ, փոխե-  
ցաւ ի ժայռ ոչ ինչ հեռէի ի յորձա-  
նացն Քարիբդեայ, ուրահագին մըրը-  
կաւ ալէկոծեցան նաւք Ոդիսեայ ար-  
քային իմակայ և Դուլիքիսնի կրո-  
ղեաց յօնիհական ծովուն: Հոմերոս  
յաւելու վնտիւ և շունս մարդա-  
կուլս: Աստ Վիրգիլ զերկոսին ա-  
ռասպելմն ընդ իրեարս խառնէ, զփոր-  
կեանն Սկիլլայ զիրս միւսումն յարե-  
լով. վասն որոյ ոմանք այլազգ կամե-  
ցան ընթեռնուղ զայս տող ըստ գրչա-  
գրաց ումանց, բայց և Ովիդիոս և Պրոս-  
պերտիոս հանգոյն Վիրգիլեայ զեր-  
կոսին Սկիլլայս ընդ իրեարս յեռուն:

85. Փէլոմէլս և Պլուտոնէ էին դստերք Պան-  
դիսնի արքային աթենացւոց. Տե-  
րէսս արքայ Յորակիոյ ածեալ զՊրոդ-  
նէ ի կնութիւն, ծնաւ ի նմանէ ուս-  
արր զիտիս. և ապա մծզնէաբար ա-  
նօրինեալ ընդ Փիլոմէլայ, եհատ  
զեզունորա՝ զի մի զոճիրն կարացցէ  
պատմէլ: Այլնորա գրով յայտնեալ  
զայն քեռն իւրոյ, և միաբանեալ զնա  
ընդ իւր, սպան զիտիս և մատոյց զնա  
Տերէսսի հօրնորա ի կերակուր: Եւ  
ապա իբրև զգլուխն ես որդուց նորա  
ած ի մէջ, Տերէսսի զայրագին ճգեալ  
սուսեր ի վոէժինդրութիւն՝ փոխե-  
ցաւ ինքն ի յուլոպ, Փիլոմէլ ի սո-  
խակ, Պրոդնէ ի ծիծառն, և իտիս ի  
փասիան:
87. Այլնաքն որ ինչ Եւրոտաս գետ  
լուսն ի Փերեայ, յորժամ սա զգե-  
տեզերքն թափառական շրջէր առ  
սէր Յակինթեայ, զայն ամենայն եր-  
գէր Սիւն: Եւրոտաս գետ ի Լակո-  
նիա, բղլսեալ յԱրկադիոյ, և ի տըն-  
կախիտ սարդենեաց հովանացեալ:
90. Մոլորակն Սատղիկ երեեալ ընդ  
այգն՝ կոչի արուսեակ կամ լուսա-  
րէր, խոկ ընդ երեկս զիշերավար: Համարէր  
սա միաձի կառավարել,  
ուր արեգակն քառաձի, և լուսին  
երկձի. բայց ընդ այգն սպիտակ երի-  
վարաւ, խոկ ընդ երեկս թիսաձի:
- Ըստ պիտիամբն Ուլիմու. քանզիքայ-  
ցրութեամբ երգոցն զմայլեալ Ուլիմոլ  
կամ երկին, գժկամակէր ընդ գալ  
զիշերոյ՝ որ լուցուցանէրն զերդս:

ՀԱՅԱՍՏԱՆ

## ՄԵԼԻԲԵՌՈՍ

Մելիբեռս հովիւ պատմէ զլիքել թեր-  
սեայ ընդ կորիդոնի առաջի իւր և Դար-  
նեայ, և զառնուլ կորիդոնի զմրցանակն։  
կորիդոն աստ զկուռնելեայ Գալլոսի  
կամ զԱսինեայ Պոլիխոնի բերէ զգէմն,  
որ երկոքին ևս քերթողք էին երեւելիք.  
Թերսիս զայլոյ ուրուք ի նախանձորդաց  
նոցին քերթողաց բերէ զգէմն . Դարնի  
զմիոյ ուրուք ի բարեկամաց նոցա, առ ո-  
րում վիճեին . իսկ Մելիբեռս զՎիրգի-  
ւեայ, որ ի ինդրելն ի նոցանէ օգնութիւն  
առ ի ստանալանդրէն զանդս իւր և զլատա-  
շինս, նոքա յապահովեն զնա և դատա-  
ւոր իւրեանց կացուցանեն :

ՄԵԼԻԲԵՌՈՍ, ԿՈՐԻԴՈՆ,  
ԹԻՐՍԻՍ

## ՄԵՂԻՐԵԿՈՆ

Ի սօսաւիւն սըզոցւոյ հարեւան-  
ցիկ բազմէր Դարնի,  
Անդք ըզիսաշինս համախըմքեալ կո-  
րիդոնի եւս եւ թերսեայ .

Թիրսեայ զօդիս, կորիդոնի ըղլիաս-  
տին կաթամբ զայծիս.  
Երկաքանչիւր ծաղկեալք տիովք,  
արկագացիք երկաքանչիւր, և  
հանգէտք ի յերգըս տաղեց երկա-  
քանչիւր կազմք ի գուտար:  
Աստանօր մոլորեալ նոխաղ հօտիս  
էր հեղինակ,  
Մինչ ըզմատաղ մըրտենիս յանձան-  
ձէի ես ի ցըրտոց.  
Տեսի զԴաքնի, ետես եւ ինքըն զիս  
անդուստ, եւ ձայնէր, Ալալ,  
Այսըր մատիր, Մելիքէէ, ողջոյն  
այծիդ է եւ խոյոց.  
Եւ թէ վայրիկ մի դադարել կա-  
րես, հանգիը ընդ հովանեաւս.  
Երինջքդ ինքնին այսըր գայցեն ընդ  
մարդս ի հուտ, աստ Մինկիս 41  
Կանաչագեղ ըզդետեղերըս պա-  
րուրէ յառոցդ ի շամբ,  
Եւ բըզզեն ի սըրբազան աստ ի կաղ-  
նիս գընդակք մեղուաց: 45  
Եւ զի՞նչ խկ առնել էր ինձ. ոչ Ալ-  
իխպէտ աստ առընթեր 46  
Եւ ոչ Փիլիս կայր առ իս, զի մոց  
եւ քեց ի կաթանէ

Աւտընին ըզդառին ի բաց ի մար-  
ցըն մակաղէր:  
Այլ եւ պայքար մեծ աստանօր կո-  
րիդոնի էր ընդ թիրսեայ,  
Եւ անաւս ի լուր խաղոյ նոցին ըզ-  
դործս իմ արարի.  
Եոքա փոխանակաւ յայնժամ ա-  
ռին մըրցել տաղեւք,  
Զի փոխառփոխնուտզելնոցա հրա-  
ման այսպէս էր Մուսայից,  
Զայս կորիդոնի եւ զայն թիրսեայ  
արկեալ ի կարգ:

### Լորիորուն

Յանկալիք մեր լիբեթը եան յաւէրժ-  
հարսունք, ազգեցէք ինձ 22  
Երդըս կողը տաղեցն հանգոյն:  
զի նա սակաւ ինչ ի ֆեքեայն 23  
Երգեաց ընդհատ ի նոււագաց, կամ  
թէ ընաւից չեցէ նոյն կար,  
Կացցէ սրածայնս այս եղէդն ըզդի-  
յանուեր սոճւցս ի կախ: 23

Թիրախ

Հովիւք արկադացիք, ըղնորընծայս  
զիս ըզբերթող  
Պսակեցէք բազեզամբ, լիցի Կոդրոս  
նախանձաբեկ:  
Կամ թէ յանդէպըս գովիցէ, նար-  
դոս վայրի ինձ ի ճակատ 28  
Բոլորեցէք, մի շուրթըն ժանոս ըզ-  
պուէտս համբակ յաշազիցէ:

Լորիդոն

Եղիւք բազմոստ զերկարակեաց  
քեզ եղջերուի Միկոն մանուկ 50  
Եւ ըզկառապին, ով Դելեան, զըս-  
տեւակիր ձօնէ զիընճի.  
Իսկ եթէ այս ինձ յաջովէ, կուռ ի  
յոլորի վիմէ ամբովը  
Արձանասցիս՝ կարմիրփեան կօշիկ  
ի սրունըս սլարաւանդ:

Թիրախ

Ամանոր քեզ գուշ կաթին եւ շատ  
աթերս այս քեզ լիցի,

Ազքատիկ պարտիզկանես գու ինաւ-  
մող, ո Պրիապէ: 35  
Մարմարակուռ իմովանն ըզբեզ  
առ այժմ կանգնեցից,  
Այլ հօտիս ի լըօանալ դառամբէք՝  
կացցես ոսկեղինիկ:

Լորիդոն

Քաղցրիկ գու ինձ քան ըզհիքեան  
ծոթոր, ներեանըդ Գալատէ, 38  
Զիւնափայլ քան ըզկարապ, գեր  
զըսպիտակ բազեզն ի գեղ.  
Արի եկ ի կըշաապինդ նախրին ի  
գոմս անդրէն դառնատ,  
Եթէ իցէ ինչ ընդ քոյդ երեկք քեզ  
հոդ ընդ Կորիդոն:

Թիրախ

Իսկ ես թուեցայց քեզ դառնագոյն  
քան զըուսակ սարգինական, 42  
Եւըս զըմնեայ քան ըզէիխան, ա-  
նարգագոյն քան ըզմամուռ,  
Եթէ չիցէ տիւս այս ինձ ձիգ քան  
ըզտարւոյ իսկ պարունակ.

Դարձայք ի տուն կըշտառինդ , թէ  
սպատկառիք երբէք երինջք :

### Կորիղոն

Աղբերք լոռաւէտք եւ դաշտիք  
գիւրիչք ի նինջ,  
Եւ որք զանօսը ածեն ըզձեօք կա-  
նաշագել թուփիք հուլանի ,  
Յերեսաց յեղյեղակաց լերուք խա-  
շին պատրսպարան , 48  
Ամառն ահա դայ բոցակէզ , ուռնուն  
ի զուարթ պըտկունք ի յուռ :

### Թիրսիս

Ե մարխ աստ գէր եւ կրակտրան .  
աստ հուր յոլով եւ մըշտավառ , 50  
Են սեւաթոյր սեամք աստանօր , ի  
մուր ի մեղծ յարաթաթուք .  
Աստ սարսուռ . հիւսիսոյ այնչափ  
ինչ ահ մեղ արկանէ ,  
Որչափ դայլոյ հօտ յոդներամ , որ-  
չափ որընթաց գետոյ ափունք :

### Կորիղոն

Են են գիհիք աստանօր , է քըս-  
մնափուշ մեղ շագանակ ,  
Եւ համասփիւռ միլոք ընդ ծառովք  
իւրաքանչիւր տապաստ անկետ .  
Բերկրին համագոյքս այժմիկ բոլոր  
գեղածիծաղ ,  
Բայց ի լերանց աստի ի բաց թէ  
Ալեքսիս կացցէ ըրքնաղ ,  
Ըզգեաոց իսկ յայնժամ տեսցես  
պըտոյալս ցամաքեալ :

### Թիրսիս

Կիղու արդ , խորշակահար նուազի  
պապեալ մարդագետին .  
Զայգեստանեաց հովանի Սպանդա-  
րամետ խանդայ բըլլոց . 60  
Այլ յոտին մերոյս Փիլեայ կանա-  
շասցին ծառք համօրէն ,  
Եւ ի զուարթ թօնընկէցս իջեց յեր-  
կիր յորդ Արամազդ : 62

### Կորիոնե

Աւկեղեայ կաղամախ , այդի հաջոյ  
Դիոնիսեայ . 63  
Գեղանւոյն մուրտ Աստղը կան , եւ  
Փերեայ իւրն է սարդենի .  
Փիլլիս սիրէ զարքակաղնի . եւ ցոր-  
չափ զայն սիրէ Փիլլիս ,  
Ոչ մըրտենի արքակաղնոյ , եւ ոչ  
փերեանն յաղթեսցէ սարդ :

### Թիլախ

Սարոյ ի պարտիզի , հայի յանտա-  
ռըս գեղասկանծ ,  
Բարձր ի լերինս եղեւին , և կաղա-  
մախ առ գետեղեր .  
Այլ գեղանւոյդ Լիկիդայ , թէ  
ստէպ դու այց ինձ առնիցես ,  
Հացի յանտառս եւ սարոյ տեղի  
տացէ ի պարտիզի :

### Մեղիրես

Յիշեմ ցայս վայր , եւ իբր ի վեգ ե-  
կեալ ի զուր՝ պարտէր թիրսիս .  
Կորիդոն այնուհետեւ է մեղ ծանօ-  
թըն Կորիդոն : 72

4. Արքադացիւ երքադանչիւր , կամ զի իսկապէս էին յԱրկադիոյ , և կամ զի հմուտք էին յերգ արկադացի .  
քանզի տեղի երգոյսոչ է յԱրկադիա ,  
այլ յայս կոյս Գաղղիոյ առ Մին-  
կեաւ գետով , ոչ ինչ հեռի ի Ման-  
տուայ :
11. Մինիս գետ յամրընթաց , որ ի Բե-  
նակեայ լճէ գետահետեալ թանայ  
զ Մանտուա , և անտի հոսէ ի Պադոս :
13. Կաղնիք առ հեթանոսս նուիրականք  
էին Դիոսի , և համարէին բնակել ի  
նոսս յաւէրժհարսունք , կեալ և մե-  
ռանել ընդ նոսին :
14. Ալէիոնէ և Փէլլէսս աղախինք Մե-  
լիբեայ :
22. Լիբերտինս աղբիւր էր ի Մագնեսիա ,  
ըստ Սոլինոսի , հանգրուանքերթո-  
ղաց . այլք ի Բիստիա դնեն զայն  
մերձ յԵլիկոն , օթեան յաւէրժհար-  
սոնց և Մուսայից :
23. Կորտոսս բանաստեղծ ժամանակակից  
վիրդիլեայ :
23. Սովորութիւն էր Ճարտարաց յա-  
րուեստս զիւրաքանչիւր գործի կա-  
խել նուէր արգադիր խնամակալաց  
իւրեանց դից . յայս ակնարկէ կորի-  
դոնի կախել զսրինդ իւր զսունոյ՝ որ  
դիցամօրն կիւրելեայ էր նուիրական ,

- վասն սիրելը նորա Առիսի ի սո՞՛ փու-  
խելը :
28. Տարապայման դովութիւն առիթ ա-  
կընհարութեան համարէր առ նախ-  
նիս . քանզի Նեմեսիս դիցուհի վրէժ-  
խընդիր չարաց և վարձատրիչ բա-  
րեաց ցամնոյր ընդ այն, և վրէժս  
յայնալիսեացն գովեցելոց պահան-  
ջէր : Առ ի զդուշանալոյ ի չարէ աս-  
տի՛ պասկէին նարդոսիւ վայրենեաւ,  
որ խափանիչ յուռթից և հմայեկաց  
համարէր : Վասն որոյ իմաստք տո-  
ղիցս են . Պատկեցէք զիս անթառամ  
պասկաւ, նախանձ արկանել ի կո-  
դրոս . իսկ եթէ նա առաւել քան  
զարժանն գովեսցէ զտաղս իմ, մատ-  
նէծաղիկ ածէք ինձ ի ճակատ՝ զի մի  
ակնհար եղէց :
50. Աստանօր Կօրիդոն նուիրէ Արտե-  
մեայ դիցուհոյ ի ձեռն Միկոնի բա-  
րեկամի իւրոյ եղջիւր եղին և կա-  
ռավին վարագու . և խոստանայ ի յա-  
ջողելորսոցն կանգնելնմա և անդըի  
կճեայ :
53. Պէտառու Աստղկան և Դիոնիսի որ-  
դի, պահպանիչ պարտիզաց, վասն  
որոյ ի դրունս անդ պարտիզաց կանդ-  
նէին անդրիք նորա :
58. Հիբլան ծովոր . Հիբլա լեառն ի ՈՒ-  
կիլիս, բերըի ծովթընոյ և մեզուաց :  
Կորիդոն աստ Ներեան անուանէ  
փաղաքշանօր զսիրուհին իւր զէու-  
վիւն Գալատէա . քանզի Ներեանն

- Գալատէայաւէրժահարսն Էր, գուռ-  
արը Ներեայ և Դորիսի, սիրելի Պո-  
լիփեմեայ : Սա իրըև դիտաց զի Գա-  
լատէա առաւել քան զինքն սիրէր  
զհովիւն սիկիլացի զԱկիսզորդի փա-  
ւոնի, սպան զնա հարեալ զվիմի, ընդ-  
որ գթացեալ յաւէրժհարսինն, փո-  
խեաց զնա ի գետն՝ որ բղիսէ յԵսնայ  
և անկանի ի սիկիլացանն ծով :
42. Քան զբոյս սարդինուիան . Լոռ իմն  
տառեպ բուսանի ի Սարդինիա, որ  
զկերողացն ձգտէ զի իղսի ժպիտը բրո-  
նազքօս, և է մահաբեր թունիւք :  
Ուստի առեալ է սարդինական կոչել  
զժաղը հեգնական բոնի :
48. Այսինքն ի յեղյեղակաց խեցգետուոյ,  
յամառնային արեւադարձէ, յորժամ  
բոցակիզագոյն է արեգակն :
50. Մարտի փայտ իւլային դիւրավառ,  
վասն որոյ և փոխանակ ջահի ի կիր  
առեալ :
60. Սուանդարտմետ կամ Դիոնիս դիք  
այգեաց :
62. Արտմանուշ կոչէին հինք զայերս կամ  
զեթեր, ուստի անձրեք շայեկանք է  
բեղնաւորութիւն երկրի իջանեն :
65. Ալիւրէա այսինքն Ներակլէս թոռն  
Ալկէոսի, որ կաղամախիւ պասկեալ  
էջ ի սանդարամետա :
72. Իմաստ տողիս է ; զի յետ այսր պար-  
տութեան թիրսեայ յայպան աղգի  
ազգի վէճս ի կորիդոնէ, յայնմէնտէ  
կորիդոն արժանի իւրումն համբաւոյ  
իրաւապէս թուի :

ԾԱՂԿԱՔԱԴ, ՈՒԹԵՐՈՐԴԻ



ԴԵՂԱՍՈՒ

Կրկնակի հովուերգութեանս սյսորիկ  
ևն մասունք . յառաջնումն պատանին Դաւ-  
ման , իբր տարփաւոր Նիսայ օրիորդի , սըր-  
տառուչ յօրինէ բողոք վասն նախամե-  
ծար առնելոյ նորա քան զինքն զՄոփսոս  
նախանձորդ իւր . իսկ յերկրորդումն Աւ-  
ֆեսիբէ իբր գեղատու՝ զատարացեալն  
յիւրմէ զատանին Դավինի կախարդա-  
նոր ի սէր իւր հնարի գարձուցանել . զեր-  
կոսին եւս կեղծ ի կեղծ ի ներքս ածելով  
քերթողին :

ԴԱՄՈՆ ԵԽ ԱԼՓԵՍԻԲԷ

Ը զՄուսայն , հանգա , զհովուացն  
Ալփեսիբեայ եւ զԴամոնի ,  
Ընդ որս երինջ իսկ ի յակճիռ կայր  
մոռացեալ զիւրըն Ճարակ ,  
Եւ լուսակունք յապուշ ընդ տաղա  
հարեալնոցին՝ յերգոցն ի վէճ ,  
Եւ ի դնացիցն ըստերիւր կասէին  
գետք ոտնակառեալ ,

Ըղթուսայն երգեսուք զԱլփեսի-  
բեայ եւ զԴամնի:  
Զեռն ինձ տուր, թէ զՏիմաւեայ մե-  
ծին հատեալ անցանես ժայռս, 6  
Եւ թէ շուրջ դու զլիւրիկեան յա-  
ծեալ ըըրջիս ըզծովափամբ.  
Իցէ զի լցցի ինձ զարութիւնըս քո  
երգել:  
Իցէ զի տացի ինձ ընդ ոլորտըս տար-  
փողել  
Զարժանիս սոփոկլեան կօշկաց ըզ-  
տաղս եւեթ քոյին: 10  
Քեւ ըսկիզբն արարի, ի քեզ ա-  
ծեալ կատարեցից. 11  
Ընկալ զառ ի քումմէ ձեռնարկեալ  
երգս ի հրամանէ.  
Եւ թող բազեղանս այսմիկ ի քոյդ  
շուրջ ի ճակատ 13  
Իմէջ յաղթականացըդ սարդենեաց  
սողսոկելց:

Այն ինչ ըստուերք գիշերոյ տեղի  
արւեալ ցուրտք ի յերկնէ,  
Մինչ գեռ ցող յարօտ փափիկիկ  
ախորժական է պախրէի,

Յեց ի յողօրկ ձիթենի սկսաւ այս-  
պէս երգել Դամնի: 17

### Դամնի

Շապեա, Արուսեկիկ, նախ քան  
ըզտիւ թեր ինձ ըզլոյս,  
Մինչ բողոքեմս ի դրուժան սիրոյ  
հարսին պատրեալ Կիայ.  
Եւ առ դիս (թէպէտ ի զուր կացին  
նոքա ինձ ի վրկայս) 20  
Առնում ի շունչ յետին աղերս հե-  
ղուլ յոգւոցս իմ ի պարզել.  
Եղեգնեակ իմ ընդ իս ըզմենալեան  
առ ինձ նըւագ: 22  
Մենալ մայրեաց միշտ սօսաւիւն,  
Մենալ խօսուն կըրէ սարոյս,  
Էզչովուաց ըսէ նա միշտ զերգըս  
սիրոյ, և ըզՊանայ՝  
Որ նախկին զեղեգունս ի կեր ա-  
ռեալ չեթող ումպէտ.  
Եղեգնեակ իմ ընդ իս ըզմենալեան  
առ ինձ նըւագ:  
Կիսէ Մոփսեայ ահա շնորհեալ, իմ  
տարփածուացըս չիք յուսալ.  
Այժմէն զուգին կորճք ընդ ձիան,  
եւ առյապայ դարուց ի դարձ 28

Այծեմունք Երկչութ ընդ շունս ի  
միասին գայցեն ի յումապ .  
Կորաբողբոջ հատ Մոփսէ ջահս ,  
ահա ածեալ գայ հարսնառքեղ . 50  
Սըփուեա ընկոյզըս փեսայդ , թողու  
զԵտա գիշերավարն . 51  
Եղեգնեակ իմ ընդ իս ըզմենալեան  
առ ինձ նըւագ :  
Հարսնացեալդ արժանւոյ քում փե-  
սայի , մերժող ընաւից ,  
Որ զեղեգնեակն իմ ատեաս , եւ  
քեզ խոտան ուլք իմ թըւին ,  
Եւ յօնք թաւարծիք եւ ձիգ ի վայր  
անկեալ մօրուք ,  
Եւ ոչ ի դից զոք համարիս ըզմա-  
հացուացս ունել խընամ .  
Եղեգնեակ իմ ընդ իս ըզմենալեան  
առ ինձ նըւագ :  
Ըզքեզ ի ցանկըս մեր տեսի , մինչ  
դու ընդ մօր քում գեռ մանկիկ  
Յինէն ածեալ ըզկընձորըս ցօղաւո-  
րըս քաղէիր .  
Միւս եւս ի տիս իմ յայնժամ յա-  
ւելցըր ամ ի մետասան ,  
Վաղ իսկ յերկրէ ի գիւրաբեկ կո-  
ղերս ելուլ իմ ձեւընհաս .

Ի՞բր տեսի , ի՞բր իսկ կորեայ , ի՞բր  
ի վըիպակն անկայ ի չար .  
Եղեգնեակ իմ ընդ իս ըզմենալեան  
առ ինձ նըւագ :  
Այժմիկ ծանեայ զինչ է սէր . ըզնա  
իսմար եւ չոռդոպէ կէ  
Կամ Գարամանոք հեռաստանեայք  
յապաւաժուտանդ ի պարեխսէն  
Ըզմանուկն օտարախորթ եւ զայ-  
լաձետ ածին ի լցոս .  
Եղեգնեակ իմ ընդ իս ըզմենալեան  
առ ինձ նըւագ :  
Մօր ի յարիւն որդեկաց ուսոյց ըզ-  
ձեռաւըն շաղախել 48  
Սէր զըժոխազնեայ . անագորոյն դու  
ինքըն մայր ,  
Արդէօք մայրդ առաւել անադո-  
րոյն , թէ ժանան համբակ .  
Համբակն այն ժանաաժուտ , այլ եւ  
դու մայր անագորոյն .  
Եղեգնեակ իմ ընդ իս ըզմենալեան  
առ ինձ նըւագ :  
Կամակար խոյս ի խաշանց տացէ  
արդ գոյլ , բարտի զնարգէս  
Ծաղկեսցէ . ոսկեղինիկ բերցեն խըն-  
ձոր կաղնիք կարծունք ,

Եւ մօշիք ըզպարարտ ի կեղեւոց  
քըրտնեսցին սաթ.

Բու ընդ կարասլոս մըրցեսցի, միւս  
այլ Որփեւս կացցէ Տիտիր, 56

Որփեւս ի մայրիս, եւ ի գըլփինս  
անդ Արիտհ, 57

Եղեգնեակ իմ ընդ իս ըզմնալեան  
առ ինձ նըւագ:

Ի ծով անդընդախոր փոխեսցին էքս  
համարոլոր,

Բարեւաւ մընայք, ո անտառք,  
յերկնակատար լերին բարձուէ  
Գահավէժ անկայց յալիս, ձօն վեր-  
ջահաս քեզ ի մահուս.

Եղեգնեակ իմ դադարեա ի մենա-  
լեան արդ ի նոււագաց:

Զայսոսիկ երգեաց Դամոն. դուք  
արդ ինձ օն, ո Պիերեանք,

Զինչ Ալֆեսիրէ անդըն կըրկնեաց,  
արկէք ի վէպ.

Զի յամենայն ինչ ամենիցըս ձեռ-  
նարկել չէ հնարաւոր:

### Ալփեսիրէ

Առ ինձ ջուր, եւ ած փափկիկ շուրջ  
ըզբագնաւըդ ժապաւէն. 66

Ազաւնիճ իւղաթուրմ եւ խունկս  
ազնիւրս խառնեսջիր. 67

Զողիկ ըզմիտըս փեսային ի գիւ-  
թական շըրջել ի հմայս

Առից փորձել. տստանօր տաղեց ի  
բաց չիք ինչ թերի.

Ածէք ի տուն ի քաղաքէն տաղք  
իմ ածէք այսր ըզմափինի:

Հըզօր են տաղք եւ ըզմուսին իսկ ի  
յերկնէ վայրաբերել. 71

Զուղեկիցս Ոդիաեայ տաղեւք Կիրկէ  
այլակերպեաց. 72

Պայթէ ՚նդ սիզով այտուցիկ թո-  
վեալ տաղիւք իժ ցըրտադին.

Ածէք ի տուն ի քաղաքէն տաղք  
իմ ածէք այսր ըզմափինի:

Երրակի ըզքեւ նարօտ ի գոյն եր-  
րեակ նախ շուրջ պատեմ.

Ըզբագնօքս այսոքիւք երիցս տալա  
շուրջ ըզքոյին

Ածեմ պատկեր. աստուած ինքնին  
ի թիւ կոճատ է զուարճացեալ. 77

Ածէք ի տուն ի քաղաքէն տաղք իմ  
ածէք այսր ըզմափինի.

Զերրակի հիւսեա երանգս, Ամա-  
րիլիս, ի զօդ երրեակ.

Հիւսեա արդ , Ամարիլլիս , ուասա  
հիւսեմ զօդ Աստղըկան . 79  
Ածէք ի տուն ի քաղաքէն տաղք իմ  
ածէք այսր ըզԴափնի :  
Որպէս կաւո այս կարծրացեալ , եւ  
որպէս մոմն ի նոյն ի հուր  
Հալեալ լուծեալ , ըզնոյն ի բոց մե-  
րոյս սիրոյ կրեսցէ Դափնի .  
Սըփուեա աղանձ , եւ կըպէրբ մա-  
տաղատունկ կէղ սարգենիս . 84  
Այրէ դրուժան զիս Դափնի , եւ ես  
ի վրէժ նըմին զայս սարդ .  
Ածէք ի տուն ի քաղաքէն տաղք  
իմ ածէք այսր ըզԴափնի :  
Նոյն հարցի սէր ի Դափնի , որպէս  
յորժամ վաստակաբեկ  
Մատակ ըզհետ զուարակի ընդ խոր  
անտառս եւ ընդ մայրի  
Ըըթեալ թափառ՝ բազմի հէքն առ  
գետեղերբ ի սէզ դալար ,  
Եւ ոչ գիշեր տարաժամ նըմա ըզ-  
դոմն ածէ ի յուշ .  
Նոյն սէր հարցի ի Դափնի , և մի ինձ  
փոյթ լիցի ի բոյժ .  
Ածէք ի տուն ի քաղաքէն տաղք իմ  
ածէք այսր ըզԴափնի :

Զոր երբեմն հաւատադրուժն եթող  
կապուտ ինձ ըզմիրոյն  
Յանկալի առհաւատչեայ , զայն առ  
նովին արդ առ սեմովք 94  
Քեզ , երկիր , աւանդեմ . սոքա  
զԴափնի ածցեն առ իս .  
Ածէք ի տուն ի քաղաքէն տաղք իմ  
ածէք այսր ըզԴափնի :  
Ըզբուսակըըս զայսոսիկ եւ զթոյն  
քաղեալ ինձ ի Պոնտոս 97  
Մատոյց նա ինքըն Մերիս , են սայց  
առատ գիւտք ի Պոնտոս .  
Տեսի ես ըզՄերիս սոքիմք յաճախ  
յեղեալ ի գայլ  
Մացառաղօղ ի մայրիս , եւ ի խո-  
րոց շիրմաց յաճախ  
Սոքիմք ի նմանէ տեսի զհոդիս վե-  
րակոչեալ ,  
Եւ տեղի ի տեղւոջէ փոխեալ ըզ-  
հունձըս սերմնարկեալս .  
Ածէք ի տուն ի քաղաքէն տաղք  
իմ ածէք այսր ըզԴափնի :  
Ամիւն ի գուրս աղէ ած , եւ յետըս  
կոյս , Ամարիլլիս ,  
Ի յորձանս արկ ի գեաոյն . այլ ի  
թիկունս հայեսցիս մի .

Սոքիմք ի Դափնի սովառազինեալ  
յարձակեցայց,  
Ոչ ի գեց ինչ նըմա, ոչ ի տաղեց  
ինչ չեք երկիւղ.  
Ածէք ի տուն ի քաղաքէն տաղք իմ  
ածէք այսր ըզԴափնի:  
Տես զիարդ աճիւնն ինքնին, մինչ  
դանդաղին ածէլ ըզնոյն,  
Իբոց շողողինի պատէ ծաւալշուրջ  
ըզբագնաւ.  
Յոյց բարենըշան, այլ ինձ զանխուլ  
Են հաւաստիք. 111  
Եւ հիլաքս հաջէ առ սեամն, իցէ  
հաւատս ընծայելի, 112  
Ո՞չ արդեօք երազայոյզք ինքնապա-  
տիրը Են տարփաւորք.  
Նըսեցէք տաղք իմ լըսեցէք, ի քա-  
ղաքէն դայ արդ Դափնի:

ԾԱՆ Օ ԹՈՒԻ ԹԻԻՆՔ

6. Առ Պոլիսն բարբառի, որս ի կող-  
մանս Աթրիկեցաց զայնու ժամա-  
նակաւ արշաւեալ ի դաւանալն անտի  
անց ընդ ծովեղերս Ալենետաց: Տիմա-  
ռու գետ է ի նմին դաւառի, որ հոսէ  
ի ծովին աղբիական. և ի բերան գե-

- տոյն են կղզեակը, ուստի բղիսեն ջեր-  
մուկը. զսոսին թուի կոչել ժայռոն  
Տիմառւոյ:
10. Ակնարկէ յոզբերգութիւնս Պոլիս-  
նի, զորս սոփոկլեան կօշկաց ասէ  
արժանիս. քանզի Սոփոկլէս ողբեր-  
գու անուանի, ինքն նախ եմցեց զսո-  
վորութիւն բարձր կօշկօք ի թատերս  
երեւոյ գուսանաց:
11. Քանզի ի ձեռն Պոլիսնի զերծոյց  
Վիրգիլ զանդաստանս իւր, յորմէ  
պատճառս էառ գրելոյ զտաղքս, ան-  
տի իսկ սկիզբն արարեալ. իսկ եթէ  
ոչ ինոյն ինքն կատարեաց, ոչ ինչ  
են զարմանք. զի քերթողաց օրէն է  
խոստանալ բազում ինչ, և ոչ կա-  
րել կատարել: Մարմէ է ևս կարծել  
զի ի վերջ մշակականացն ակնարկի-  
ցէ, զորմէ ասացաք ի Ծառէ. Զ. 67
15. Իմաստ տողիցո է. թող ինձ պսա-  
կել զքեզ քերթողական բաղեղամբ,  
որ յաղթողական սարդենեօք պսա-  
կեալդ ես. քանզի յառաջն դափնի  
պատերազմողաց պահեալ եր, և ա-  
պա քերթողաց ևս տուաւ:
17. Իմա յոզորկ բուն ձիթենւոյ, կամ  
ի ցուալ ձիթենի:
20. Այսինքն զի ընդունացն եղեն խոստ-  
մունքն նիսայ, ընդունացն և դիցն  
կալ վկայս խոստմանց նորա:
22. Մինալ լետան յԱրկադիա, նուի-  
րեալ Պանայ, ուր հովիւք սովոր են  
երգել տաղս այսպիսիս:


28. Կորհ կենդանի եղջերուաքաղ, առիւն  
ծաձեւ մարմնով, թևաւոր և արծը-  
ռունզն, թշնամի և վեսավկար ձիոց:  
50. Մոդառո ոստին Դամննի, որում Նիսա  
խօսեցեալ էր ի կնութիւն. վասն որոյ  
Դամնն ուրախակից լինի հեգնօրէն  
ընդ ոստիսի իւրում, և յորդորէ զնա-  
դառնութեամբ, յարարողութիւնս  
հարսանեաց՝ գիշերոյ ի վերայ հասա-  
նելով: Սպալորութիւն էր չնեքքումքք  
ջահիւք զհարսն ի տուն փեսային ա-  
ծել. և փեսային ճապաղել ընկոյզո  
առ ոստ հարսին, ի նշան թողլոյ նո-  
րա զմանկութիւն:  
51. Երա լեռան բարձր ի թեսաղիա, յա-  
րեմտից Ատտիկեայ և Բիովտիոյ,  
ուսուի երեւէին աստեղք անկանել  
յետկոյս Ետայ, որսկէս և ծագել  
յիդայ լեռնէ Փոխւգիոյ՝ որ յարեւ-  
լից նոցա կայր:  
44. Խոմար և Հառդոսկ. տ. ի Ծաղի Զ. 55:  
45. Գարումանոդ, խորին Լիբիոյ բնա-  
կելք, առանց օրինաց, առանց օրի-  
նաւոր ամուսնութեան:  
48. Մայր իմա զՄԵՒԿԵ դուստր Ա. Ե-  
տայ արքային կողքիսացւոց, որ եցոյց  
Յասնի առաջնորդին Արգոնաւոր-  
դաց զհնարս յափշտակելոյ զգեղմն  
ոսկի, և ընդ նմա յարքունեաց հօրն  
իւրոյ խոյս ետ: Ա. Ե. ապա մերժեալ  
ի նմանէ ի բաց վասն սիրելոյ նորա  
զկրեւսա դուստր կորնթացւոց ար-  
քայի, դիւթական հուրք զհայր ընդ

- գստեր ծախեաց, և զորդիս իւր զծը-  
նեալս ի Յասոնէ ակն յանդիման հօր  
նորա փողոսեաց:  
56. Զարմանը իմն են երգեցիկս համա-  
րել քերթողաց զկարապս, և մանա-  
ւանդ ողբաձայնս ի մահուն, որ ա-  
մեննին ի կեանս և ի մահու համերքն  
են: Տիտիրոս աստ ընդ հովիւս անե-  
րաժշտս համարի:  
57. Ա. Ե. լեռաբացի ի Մեթիմայ քաղա-  
քէ Լեսպեայ կղզւոյն, քնարահար և  
տաղասաց անուանի: Աս արուեստին  
Ճարտարութեամբ մեծացեալ յիտա-  
լիս, իբրև դառնայր ի Կորնթոս առ.  
Պերեանդր արքայ՝ որում սիրելին էր  
յոյժ, յընչաքաղց նաւաստոյն ըն-  
կեցաւ ի ծով. բայց մի ի դլինաց, որ  
քաղցրութեամբ երգոց նորա զմայ-  
լեալն էր, առեալ տարաւ զնա ի Տե-  
նար աւան լակոնիոյ. քանզի առաս-  
պելին սիրել դլինաց զերաժշտու-  
թիւն:  
66. Զայս ամենայն պատուիրէ վհուկ Ա. Ե.  
փեսիրէ նաժշախին իւրում Ամարիլ-  
լեայ:  
67. Զալուանիճ, որով իմա և զայլ ամե-  
նայն բանջար խոտոյ, ի կիր արկա-  
նէին մողք և վհուկք ի դիւթութիւնս  
և ի կախարդանս:  
71. Համարէր ի հնութեն առ հեթանոսս  
կարել կախարդաց ի ջուցանել յերկ-  
նէ յերկիր զլուսին, կամ զգոյն նո-  
րա փոխել յարիւն. որպէս և մերզա

- Եղնկայ յիշատակեալ ի դ . 247 . եղ-  
ծանէ և հերքէ զայս մոլար կարծիս :
72. Կիւնի դուստր արեգական և Պեր-  
սայ յաւերծհարսին , քոյր Այետայ  
արքային կողքեցւոց , և մայր Մե-  
դեայ : Սա ըստ առասպելաց՝ զօրու-  
թեամբ դեղոց և ի հարուած ցպոյն ի  
գազանս փոխէր զմարդիկ , այսպէս և  
զընկերս Ոդիսեայ փոխեաց ի խոզս :
77. Պիւթագորեանք ի թիւս դնեին զհա-  
մագոյից հաստատութիւն , և հզօրա-  
գոյն ի թիւս համարէր ռամփին զկո-  
ճատ կամ զանգոյգ : Վասն որոյ ըզ-  
հօտա անդէցոց և զգունդս բանակաց  
անզզպս առնեին : Խոկ աստ անզոյդ  
թիւ իմանի երրեակն գերագոյն ի  
թիւս . զի ըստ Արիստոտելի և ըստ  
Պլուտարքեայ՝ բովանդակէ զսկիզբն  
զմէջ և զկատարած , և զի դարձեալ  
սովաւ զօրութիւնք դիցն երկնաւո-  
րաց և սանդարամետականաց բացա-  
տրին . քանզի երրեակ ի ձեռին Արա-  
մագդայ նկարին շանթք , և Պիսիդո-  
նի երեքարձէն գաւազան , և Պլու-  
տոնի երեքզիլսի շուն . Պարկայք ե-  
րեք , Գորգովնայք ժանտք դժոխոց  
երեք : Ըստ այսմ և Արտեմիսայ եռա-  
գիմակ էին պատկերք , և անուն էր  
յերկը Անահիտ կամ Արտեմիս ,  
յերկինս լուսին , և ի Անդարամետո  
Եկատէ . յոր թուի աստ ակնարկել  
բանս՝ Աստուած ինքնին ի նիւ ինտու-  
ի պատրժուցիւուլ :

79. Թելս իննեակ պատուիրէ չարամա-  
նել , երիս սպիտակս , երիս կարմիր ,  
և երիս սեւաւ . և ի միասին զայտստիկ  
յերիս հանդոյցս կապել՝ ասելով .  
Հիւսեմ զօդ Աստղըկան , որ եր ձե-  
կախարդանացն :
84. Քանզի տղանչ կամ մուրկ զգոհիւք ա-  
ծէին , այսպէս պատուիրէ առնել և  
զպատկերաւն Պափնեայ իրը զոհե-  
լոյ ի գիւթականն բազնի :
94. Ի գիւթութիւնս ի կիր առնուին  
զգիսակս կամ զհանդերձս այնորիկ՝  
զոր գիւթելն կամելին . վասն որոյ վը-  
հուկս աստ զգրաւականս սիրոյ թու-  
ղեալս ի Պափնեայ թաղէ առ սե-  
մովքն , առ ի ձգել զնա անդր :
97. Պոնդոս գաւառ փորուն Ասիոյ . ո-  
րում սահման է ի հիւսիսայ եւքսի-  
նեանն ծով , և յարեկլից կողքիս ,  
յորս առատ գիւտք են թիւնից : Ի  
Պոնտոս թագաւորեաց Մեհրդամ՝  
որ թունիւք կերակրէր , և ի Կողքիս  
ծնեալէր Մեդէա՝ դեղատու հոչա-  
կաւոր :
111. Պատմէ Պլուտարքոս , զի յորժամ՝  
Տերենտիա կին կիկերնի զոհ մա-  
տուցանէր դից , սոյն դէպք պատա-  
հեցին բոց ի մոխրոյ ցոլանալ , և Յո-  
տեանք զայն պարտութեանն կատի-  
լինայ ցոյց բարենշան համարեցան :
112. Հիւսէս անուն շանն , որոյ հաջիւն  
նշանակ էր դալստեանն Պափնեայ :

ԾԱՂԿԱՔԱՂ ԻՆՆԵՐՈՐԴ



ՄԵՐԻՍ

Ի ժամանակին՝ յորում Վիրգիլ ի  
բաշխս անդ կալուածոց զերծոյց ի ձեռն  
բարեկամաց իւրոց զիւրսն, որպէս յա-  
ռաջնութն ի հովուերգութեանցա ասա-  
ցաք, զօրականն՝ որում անկեալ էին ի վի-  
ճակ անդաստանք նորա՝ հալածէր զնա.  
վասն որոյ հարկ իսկ եղեւ նմա փրկել  
զկեանս իւր ի լող ընդ Մինկիսու: Բայց  
ի զնալն իւրում ի Հռովմ առ ի զերծա-  
նել ի հարստահարութենէն իշխանու-  
թեամբն Ոկտաւեայ, թողեալ էր ի վե-  
րայ կալուածոցն զՄերիս զաւառապետ,  
հրաման տուեալնմա հնարել ողոքել ըն-  
ծայիւք զյափշտակօղն: Արդ Մերիս ի  
տանել առ նա զընծայս՝ պատահէ Լիկի-  
դայ մտերմի իւրում յուղւոջ, եւ ընդ նը-  
մա զրուցատրէ զՄենալկայ՝ որ զՎիրգի-  
լեայ բերէ աստ զդէմն. եւ պէսպէս եր-  
դովք զբօմնուն զՃանապարհայն:

Լիկիդայ եւ Մերիս

Լիկիդայ

Յն, Մերիս, ի քաղաքն ուր արա-  
հետք ածէ՝ զիմես:

### Մերիս

Վենդանեաւ մերով ցայնվայր, ով  
Լիկիդաս, ժամանեցաք  
Զի եկ օտար, ո կատկածէր, զարտ  
մեր գրաւեալ ժըպրհի սպառնալ.  
Ի բաց մըշակըըդ բընիկը ի բաց  
գնացէք, իմ է ստացուած:  
Մէք արդ նըկուն եւ տըխուր, զի  
զամենայն ինչ շըրջէ բախտ,  
Ըզիսոյս զայսոսիկ նըմա ի նուեր  
մտառւցանեմք.  
Եցէ թէ մի լիցի նըմա բարեաւ ի  
նուերըըս վայելել:

### Լիկիդաս

Ըստուգիւ ապաքէն լըւեալ էր իմ,  
զի ուստի բըուրք  
Զիջանել ըսկըսանին, եւ ի դիւրին  
ի դարեւանդ  
Ըզյօնարն խոնարհել, անտի մինչեւ  
ցալիս ջըրոյն  
Եւ մինչեւ ցըհինաւուրց փիճոյն  
դագաթըն վաղաբեկ

Մենալկասն այն ձեր սպահեալ իցէ  
տաղիւք զանդս անկորուստ:

### Մերիս

Ի զրոյց համբաւոյն լըւեալ արդեօք  
իցէ քո զայն,  
Բայց այնքան տաղք մեր ի մէջ ա-  
րիսական զինուց զօրեն,  
Որչափ ընդդէմ արծուոյ ընդ օդո  
ըսպառնալից խոյացելց  
Քաւոնիկ աղաւնեաց, ով Լիկի-  
դաս, զօրել տան վէսկք: 16  
Եթէ ոչ ի փառաբեալ ինձ ի սղո-  
ցւոյն ձախող աղուաւ,  
Կարճատել աղդէր կանուխ իւ եւ  
իցէ հնարիւք ըզմէ՛,  
Ոչ քոյդ այժմիկ կեայր Մէրիս, եւ  
ոչնա ինքըն Մենալկաս:

### Լիկիդաս

Այլ, աւազ, իցէ խակ մարթ յայդ-  
քան ոճիր մըտաբերել.  
Փոքըը միւս եւս ի միասին ընդ քեզ,  
Եղուկ, ով Մենալկաս,

Եւ քոյդ իսկ ըստովումն յափըշտակէր ի մէնջ ի բաց。  
Ո՞ զլաւէրժհարսունս երգէր յայնժամ, ո՞ ծաղկաւէտ  
Դալարի սըփուէր յերկիր, կամ հովանի սաղարթագեղ  
Ածէր զաղբերը, եւ կամ ո՞նուագէր ըզանգը զոր այժմիկ,  
Առ անձկալին Ամարիլլէակ մեր մինչ դնայիր, բարձի զանխուլ.  
« Տիտիրէ, արածեա զուլս իմ մինչ զեւ դամ, սուզէ ուղին. 27  
» Եւ յարօտոյ յումպ ըզնոսա ած.  
այլ յածել անդ, Տիտիրէ,  
» Տես մի այծուն պատահիցես, քանդի խեթիէ նա եղջերաւ. » :

### Մերիս

Կամ մանաւանդ զոր չեւ Մենալի յամբոկ ածեալ երգէր Վարեայ. 50  
« Բարձրի յաստեղս ըզքո անուն ածցեն կարագք քաղցրանըւագք, 51  
» Ո՛վ Վարէ, Եթէ միայն մեզ քեւ Մանտուա կացցէ մնասցէ,

» Հերին Կրեմնայ մօտիկն այն յոյժ եղուկ Մանտուա » : 53

### Լիլիդաս

Խոյս ի կիրնեանցըն գեղձից իցիւ տացեն մեղուաց քոց պարք, 54 Իցիւ արջառք քո ոււսուցիկս ածցեն զըստինս հովուեալք ի սինձ. 55 Են են եւ իմ տալք, կացուցին քերթող եւ զիս իսկ Պիերեանք.  
Ըսկըսիր թէ է ինչ քո • գուշակ եւ զիս կոչեն հովիւք,  
Այլ չեմ նոցին գիւրահաւան, զի չեւ Վարեայ չեւ իսկ Կիննայ 58 Թըւիմ բաւական երգելնըւագ ինչ արժանի,  
Այլ սադ կըռչաձայն ի մէջ սկորոց քաջաձայնից :

### Մերիս

Զայդ իսկ եւ ես, ով Լիկիդաս, մընջիկ ի միտս իմ յեղյեղէմ, թէ ինձ ի յուշ լիցի ածել, եւ չէ ինչ տաղն այն հետեւակ:

- « Արի եկ, Գալատէա, զի՞նչ ըզբօսանիք են ի յալխ։
- » Աստ գարուն ծիրանելրիեան, աստանօր մարդ շուրջ ըզգետով
- » Ալփուէ ծաղկունս ազգի ազգի,
- սպիտակափառ աստ կաղամախ
- » Սաւաննի ըզքարայրիւ, հիւսեն ձասպուկ ուռք հովաննի։
- » Արի եկ, թող ըստահակ ծովուզեզերո ալէկոծել։

### Հիկիդաս

Զի՞նչ էր այն՝ զոր ի քէն լըւայ ընդ ջինջ գիշերաւ երդ։  
Դաշինքն ի միտս իմ յածին, ըզվանդս երդոյն թէ յիշեցեմ։

### Մերիս

- « Առ ի՞նչ ըզվաղեմի ելս աստեղաց գիտես, Դամինի։
- » Դիոնեանըն կեսարու ահա ծագէ աստղ երկնածեմ, ՅԱ
- » Ասաղ՝ իւ որայք հասկաթուու զըւարձանան, իւ ողկուղակ

- » Ի գարեւանդ արեգջեր գունաւուրի պըտղախայծեալ։
- » Տընկեա տանձիս, ով Դամինի, թուունք ըզմիրգսըն քաղեսցին։ Զամենայն ինչ ի բաց եւ զյիշատակս իսկ ածեն տմբ։
- Յաճախ ի յերգս ի մանուկ տիս յիշեմ ի մայրն ածեալ զարեւ։
- Այլ ի սպառ ի մոռացօնս անկան արդ տաղքն, եւ ձայն ինքնին Խոյս ի Մերեայ ետ ի բաց, գայլք ըզՄերիս կանուխ տեսին։ 58
- Սակայն շատ իսկ Մենալկաս քեզ զայսոսիկ յեղյեղեսցէ։

### Հիկիդաս

- Ի բաղբաղայս ընդ երկար ձըգեալ ըզակը մեր թարթափես։
- Ահա ալիք քեզ ծայր ի ծայր լըսեն այժմիկ քաղցրածաւալ։ 61
- Տես զիանդ հովմակոծեալ օդոցն ի սոլառ անկան մըսունչք։
- Ահա ի կէս ուղւոյս հասեալ կամք, եւ շիրիմ բիանորի 63

Գայ աւասիկ աստ յերեւան։ աստ  
ուր մըշակք ըղթանձրախիտ  
Քաղեն ի բաց ըզապարթ, աստ,  
ով Մերիս, եկ երգեսցուք։  
Թող աստ ըզնոյս, եւ դէմ եղեալ  
անդը ի.քաղաքն անցուք յառաջ։  
Կամ գիշերոյ եթէ խիթամք կան-  
խել ածել տեղատարափ,  
Ի յընթացս անդ երգեսցուք, նըւազ  
մեղ ռահն ածցէ վասաակ։  
Եւ զի յերգելանդ ընթասցուք, ըղ-  
բեսն ի բաց առնում ի.քէն։

### Մերիս

Զեռն ի գործ պատանեկիկ ի կա-  
րեւորս արդ արասցուք,  
Ըզկայ այժմիկ առ ի յերգոց։ յոր-  
ժամ նա ինքն այսրէն գայցէ,  
Ճահագոյն լիցի յայնթամ մեղ ար-  
կանել աւալս ի մըրմունջ։

ԾԱՆ Օ ԹՈՒԻ ԹԻԽՆՎ.

16. Քառանիտ մամն է Եպիրոսի, բայց  
քաւոնացւոց ամրեալ երբեմն յԵպի-  
րոս՝ անտի Քաւոնիա կոչեցաւ բոլորն  
փոխանակ մասին։ իսկ գառնիկի կո-  
չել զաղաւնիս, զի ի գոդոնեան ան-  
տառին յԵպիրոս ի կաղնեաց ետուն  
պատգամն ըստ առասպելին աղաւնիք  
երկու, մին անտի թռուցեալ ի Դել-  
փոս ի մեհեանն Ապոլոնի, և միւսն ի  
տաճար ամմոնեանն Արամազդայ, որ  
յայնմէնետէ եկաց դաբիր հռչա-  
կաւոր։
27. Ածէ աստ հետզետէ հատուածս ի  
տաղիցն՝ զօր ասաց բարձեալ գողու-  
նի։ Տիտիրոս աստ է խաշնարած ոմն  
ի համբակաց Ալիրգիւեայ։
31. Լարտուս իմա աստ զքերթողս, իսկ  
զերգելոյ կարապից ու. ի ծառվ. լ. 56։
55. Մանապուտ և Արեմոն քաղաքք յացս  
կոյս Գաղղիոյ, առաջնն առ Մին-  
կեաւ գետով, երկրորդն առ Պաֆո-  
սիւ։ Արեմոնացիք կուսակից եղեն  
Անտոնիոսի ընդում Ոկտուիանեայ  
վասն որոյ ապա յետ պատերազմին  
տուաւ Արեմոննա հինաւուրց զօրաց  
յաղթականին, և զի չէր այն բաւա-  
կան, յաւերաւ և մամն ինչ յանդաս-  
տանաց Անտուայ, վասն որոյ եղեւ-

- լի և զնա կոչէ վասն սահմանակիցն  
գոլը հիբն կրեմոնայ :
54. Գեղջ, լու. taxus. թուփ վնասակար,  
յորմէ ճարակեալ մեղուք՝ գառն գոր-  
ծեն մեղք. վասն որոյ խոտի մեղք  
կորսիկայ վասն գեղձից և մոլախըն-  
դի առաստ ի կղզւոջն գոլը: Եւ զկըզ-  
զիս զայս, որ է ի միջերկրական ծո-  
վու մերձ ի Սարդինիա և ի Սիկիլիա,  
կոչէին Յոյնք կիրսու յանուանէ կիր-  
նեայ ուրումն թագաւորի :
55. Զօմնած տես ի Ծառչ. Ա. 84:
56. Վարսա իմա զայն, զորմէ ասացաք ի  
Ծառչ. Զ. 8: Խոկ Կիննա զմեծին Պոմ-  
պէի թոռն ի գտուերէ, որ յառաջն  
թշնամիէր Ոկտավիանոսի, և ապա ե-  
գիտ շնորհս առ նմա, և բգեաշխ խոկ  
եկաց ի Հռովմ:
57. Դիսնեան կոչէ զկեսար, զի յԵնէա-  
սայ ասի սերեալ, և մայր Ենեայ հա-  
մարի Աստղիկն՝ զօր Դիսնէ յաւերժ-  
հարսն ծնաւ. ի Դիսնէ ըստ բազմաց:  
Աստանօր Մենալկաս կամ Ակր-  
դիլ խօսի առ հովիւն Դամինի բարե-  
կամ իւր զմահուանէն Յուլիոսի կե-  
սարու, յորոյ ի դամբանական հան-  
դիսն փարսամ յերկինս ասի երեեալ  
ընդ եօթնեակ մի :
58. Ասասալելէն գայլըց կերկերել զայ-  
նոսիկ՝ զօրս ինքեանք նախ տեսա-  
նեն, և կերկերել եթէ ինքեանք նախ  
յակն անկանիցին: Աստանօր Մերիս  
պատճառս դագարելոյ յերդոցն ածէ

- զմոռացօնս իւր և զնուաղումն ձայ-  
նին, այլովքն հանդերձ. և Լիկիդաս  
հակառակօքն յորդորէ զնա յերդ:
61. Իմա զալիս Մինկեայ գետոյ, որ թա-  
նան զՄանտուա և զմերձակայ դա-  
ւառս :
62. Բիանոր կամ Ոկնոս արքայ Ետրու-  
րիոյ, որդի Տիբեր գետոյ և Մանտո-  
վայ յաւերժհարսին, յորմէ անուա-  
նակոչեցաւ քաղաքն Մանտուա կա-  
ռուցեալ ի Բիանորէ: Շիրիմ սորտ  
առ Ճանապարհաւն կայր ըստ նախ-  
նեացն սովորութեան. վասն որոյ ար-  
ձանագիրք դամբանականք առ ուղե-  
ւորս բարբառին. կաց ուղեւորդ,  
Դարձիր հիւրդ, և այլն:
-



Գ Ա Լ Լ Ո Ս

Գալլոս միրեր զԼիկորիս օրիորդ . այլ  
նորա արհամարհեալ զԳալլոս , զայլոյ ու-  
րուք երթեալ էր զհետ մինչև ի Հռետիս  
և ի հեռաւոր գաւառս խտալիոյ և Գալ-  
լիոյ՝ մերձ ի Հռենոս և յԱլպիս : Աստա-  
նօր կեղծէ քերթողս երթեալ զԳալլոս  
առ վշտին յաքսոր ինքնակամ յԱրկա-  
դիս , վայր հռչակաւոր առ հովիւս և առ  
հովուերգակ քերթողս՝ յորս երեկի էր  
Գալլոս ինքնին : Անդր հասանեն առ նա-  
բարեկամք նորա և դիք անտառաբնակք  
առ ի սփոփել զնա . իսկ նա բազում ինչ  
առ ի սթափումն սիրոյն ընդ վայր յեղյե-  
ղեալ որպէս սովոր են տարփաւորք՝ դառ-  
նայ անդրէն ի բնաւորականն իւր :

---

Ղղլերջին դու ինձ զայս , Արեթու-  
սա , մասոն վաստակ . 1

Սուղ ինչ տաղ , Լիկորեայ իսկ յըն-  
թերցումն , է ինձ ի Զահ 2

Երգել իմոյս Գալլեայ ի նոռէք . Եւ  
ողացի երդըս Գալլեայ :  
Այսպէս իցիւ ընդ սիկանեան մինչ  
ընդ ալեօք սահեալ դընաս , և  
Մի ընդ քոյսըդ խառնեօցէ Դորիս  
դառնիճ զիւրըն կոհակ : Յ  
Առ ինձ Երգ , ըզԳալլեայ զանձուկ  
սիրոյն նըւագեսցուք ,  
Մինչ ի մատաղ թաւաթուկի տա-  
փունչք ի Ճեմ Ճարակին ուլք .  
Ոչ առ խոռլս աստ նըւագեմք , կըրկ-  
նեն բոլոր անդրէն անտառք :  
Ո՞ր մայրիք , կամ ո՞ր ըզձեղ մացա-  
ռախիտք արդելուին ,  
Օրիորդք յաւէրժարսունիք , մինչ  
բուռն ի սէր կիզցը Գալլոս . 40  
Զի ոչ ըզձեղ Պահնասեայ , զի ոչ  
Պինդեայ իսկ գագաթունիք 41  
Կասեցուցին , եւ ոչ նա ինքն աւո-  
նականն Ագանիպալէ : 42  
Սարդենիք իսկ ըզնա , ըզնա լացին  
եւ մոշեստանիք .  
Նոճաբերն ելաց Մենալ ընդ մենա-  
ւոր ժայռին քըւաւ 44  
Անկեալ ըզնա , եւ սառնապատքըն  
Նիկոյ լացին պարեիք :

Շուրջ ահա կան եւ օդիք , նոքա ըզ-  
մեզ ոչ անգոսնեն .  
Մի եւ դու զնոսա , քերթողըդ դիւ-  
ցական , մի անգոսներ .  
Գեղանին իսկ Ագոնիս առ դետե-  
զերս հովուէր ըզհօտ : 48  
Եկն եւ հոտարածն , եկին յուշեկ  
արօրագիբք .  
Եւ տամուկ ի ձմերային կըթոց  
կաղնոյ եկըն Մենալէ .  
Գային բընաւք ի խընդիք՝ ուստի ի  
քեզ սէրդ այդ հարեալ :  
Եկեալ եւ Ապոլոն . Ցնորիմ , ասէ ,  
դու ո՞վ Գալլէ ,  
Այլում անձկալին քո Նիկորիս դի-  
մէ ըզհետ ,  
Ընդ ձիւնակոյտ եւ ընդ ահեղ հա-  
րեալ Ճամբարը տարագնաց :  
Գայը եւ Պահարիկն ածեալ գեղ-  
ջուկ պըսակ ի գլուխ , 23  
Ծըզօտ ծաղկաւէտ եւ ստումր շու-  
շանըս Ճօճելուլ .  
Գայը եւ աստուածն Արկադիոյ աս-  
տուածըն Պան , զոր եւ տեսաք  
Ներկեալ նօթիւք եւ կարմրահատ  
թըփոյն ի միրդ բոսորատիսլ ,

Եւ զի՞նչ, ասէ, ճար եւ ճարակ. չէ  
ինչ սիրոյ փոյթ զայսալիսեաց,  
Ոչ լալեօք սէր անողորմ, ոչ ի վե-  
տակ մարդագետին,  
Ոչ մեղուք յագուըրդ ի սինձ, եւ ոչ  
առնուն ուլք ի սաղարթ:  
Այլ նա տըրտմադին. Արկադացի-  
քըդ դուք, ասէ, 53  
Զայսոսիկ ընդ դարեւանդըս ձեր  
առջիք երգս ի մըրմունջ,  
Քաջահըմուտք դուք եւեթ յերգըս  
տաղից, արկադացիք.  
Ա'վ քանի թեթեաբեսն յայնժամ  
ոսկելիք իմ հանդիցեն, 55  
Եթէ զտարփանս իմ երբեմն առջիք  
ի սրինգդ եղերերգել:  
Յանկարծ էի ես մի ի ձէնջ, եւ կամ  
հօտիդ ձեր պահապան,  
Կամ պատահէր ինձ այգեկութ ձե-  
րոցդ հասուն գոլ ողկուզաց:  
Ըզդիլիս ապաքէն կամ զԱմինտաս  
թէ սիրէի,  
Կամ զայլո ոք եւ իցէ, (զի՞ իսկ թէ  
թուխ իցէ Ամինտ,  
Զի սեաւ եւ մանուշակք զի սեւո-  
րակք են եւ յակինթը),

Ընդ իս ի մէջ ուռենեաց և ընդ ճա-  
պուկ այգեաւ բաղմէլ.  
Փիլիս ծաղկունս ինձ հաւաքէր, եւ  
գեղգեղէր երգս Ամինտաս:  
Աստ աղբերք զովարաք, արօտք  
փափկիկք աստ, Լիկորիս.  
Աստ անտառք, գոյր ինձ ախորժ  
աստ կենակիցել ընդ քեզ ի սպառ:  
Այժմ անազդակ սէր դըժնէին զիս  
Արիսի վառել ի զէն  
Ի խռան նետից եւ ոխերիսմ ախոյե-  
նաց բըռնազքօսէ. 47  
Դու նըժդեհ ի հայրենեաց, (իցիւ  
մարթէր ինձ չհաւատալ)  
Զալպեանցեւեթ ձեանց, ուանգութ,  
եւ ըզհոռենեան սառամանեաց 49  
Մենակ գու զփորձ թարց իմ առ-  
նուս. ո՛չ սառըն քեզ վեսուէ իսկ ոչ.  
Ոչ իսկ, աւազ, սառնասառոց հեր-  
ձուն քոյին գիրգ դարշապարք:  
Գնացից թափառ, եւ որ ի տողս յի-  
նէն քալիկեանս ոլորեալ տաղք՝ 52  
Ի սրինդ սիկուլեան հովուին առից  
զայն դաշնակել: 53  
Ընտրեցի, այո 'նդ անտառս եւ ընդ  
խըշտիս գալ երէոց, 54

Եւ ըղատրիանս իմ՝ դրոշմել մատա-  
ղատունկ ծառոց ի բուն.

Աճեցն ծառքն, ի միասին եւ դուք  
տարիանիք իմ՝ աճիցէք:

Պարակից յաւերժհարսանց ելից և  
յայց շուրջ ընդ Մենալ,

Որսացայց կինձն ամեհիս, եւ ոչ  
իսկ ինձ սառամմանիք

Արկցեն խափան ըղսղարթենեան  
պատել մացառս ասպականեօք. 59

Արդէն ընդ սարս ու՝ նդ սօսաւիւն  
մայրեաց թըւիմ շահատակել.

Ի լայնալիք պարթեւական քաղցր  
է ճայթելնետ կիթոնիկ. 61

Իբր այն՝ թէ այսոքիկ ըղմերս ա-  
ւիւն բըժքիցեն, 62

Կամ թէ հաշտ ազիտիւք՝ մարդկան  
աստուածն այն առնիցի:

Աստրատին պայք եւ պարիկք ոչ  
եւըս մեզ ախորժ թըւին,

Եւ ոչ իսկ տաղք. դուք իսկ օն անդր  
ի բաց կացէք անդրէն անտառք.

Ոչ ըղնա ամոքել եւ հոգք իսկ մեր  
թէ կարիցեն,

Եւ ոչ ի խոր թէ ի սարսուռ առ-  
նումք զԵրբեայ ալիս ի յումպ, 67

Կամ թէ ի գէջ ձըմերայնի բերեմք  
ըղձիւն սիթոնական. 68

Եւ ոչ թէ զիսան յԵթովլպիս ընդ  
խեցգետւովաստեղք հովուեմք, 69

Մինչ տօթակէզք ի կընձնոջ խորին  
թերթիքն իսկ գոսանան.

Ամենայնի յաղթէ սէր, տեղի եւ  
մէք տացուք սիրոյ:

Զայսոսիկ ցայսլայը ձերումըդ քեր-  
թողի եղանակել

Չատ լիցի, ով գիցուհիքըդ պիե-  
րեանիք, մինչ կողմանեալ  
ինքըն սակառս ի նըրբենի կաղմէ  
յոսաոց ողորտհիւս:

Ձեօք մեծամեծք այսոքիկ թըւես-  
ցին տաղք իմ Գալլոսի,

Այնմ որոյ բոց սիրատարփ այնիքան  
աճէ յիս ժամ ի ժամ,

Որքան ի նոր գարնայնի դալարա-  
գեղ աճէ թըմքի:

Օ՛նյարիցուք, ծանր հագներդուաց  
է հովանի, նա մանաւանդ 78

Ըստուերք ծանունիք են գիհւոյ.  
ինասէ ծըմակ եւ արմբաեաց.

Աըշտասինդք երթայք ի տուն, մեր-  
ձի երեկ, երթայք իմ ուլք:

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ


1. Զգալլոսէ պետք է Ծաղկ. Զ. 67  
Արենուսս աղբիւր ի Սիկիլիա, յոր  
ասեն դաշխառնիւ Ալֆեսի դե-  
տոյն Պելոպոնեսեայ, անցեալ ընդ  
ծովառանց խառնելը ընդ ալիս նո-  
րա. և ապացոյց, զի որ ինչ արկեալ  
անդր ի յունաստան՝ գայ ի վեր երե-  
ւի յԱրեթուսա աղբեր ի Սիկիլիա:  
Յաւելուն առասպելը սիրեալ Աւ-  
ֆեսոսի զԱրեթուսա յաւերժչարսն.  
և ի փախչիւ սորա ի նմանէ, Արտե-  
մայ դիցուհւոյն փոխեալ զյաւեր-  
ժահարսնն յաղբիւր, և փախուցեալ  
զնա ի ներքուստ ծովու, և ի Սիկիլիա  
ի վեր բղխեցուցեալ. և Ալֆեսի ե-  
րագեալ զհետ նորա, և զալիս իւր  
ընդ նմա խառնեալ:
2. Լինրիւ ազատագիր Վոլումեսայ ա-  
տենակալի, որ սիրեցեալ ի Գալլոսէ  
և ոչ երեսս առնէր նմա:
3. Սիկինէան այսինքն սիկիլեան, կամ ի  
Սիկանոսէ յորդւոյ Կիկլոպայ, և  
կամ ի սիկանեանց ի Սպանիոյ գաղ-  
թելոց անդր ի Սիկիլիա, այսպէս կո-  
չեցեալ:
4. Դրբիւ գուստոր Ովկիանու և Տեթեայ.  
որ աստ առեալ է փոխանակ աղի ա-  
լեաց ծովու, յորոց անխառն պա-  
հեալ ալիք Ալֆեի և Արեթուսայ:

10. Յաւերժհարսունս իմանայ աստ ըզ-  
նայագս խնամակալս աղբերաց, որ ի  
Պարնասսեայ ի Պինդոսէ և յԵլիկոնէ  
բղխեն, և մեղադրէ նոցա զի ոչ եկին  
սփոփել զմէր Գալլոսի. որով լու-  
լեայն զնոյն ինքն զԳալլոս յանդի-  
մանէ, զի զանց զտաղիւք արարեալ  
պարապէր ի սէր:
11. Պինդոս լեառն է ի Մակեդոնիա,  
մերձ յԵպիրոս և ի Թեսաղիա, որով  
երեցունց իսկ գաւառացս պատկա-  
նի: Կէսք Համարին պատկանել նմա  
և ի Փովկիս և ի Բիովտիա, և վասն  
այն ի Փովկիս կոչել Պարնաս, և ի  
Բիովտիա Ելիկոն և Կիթերոն. զի  
չորեքին լերինք թէպէտ և բացէ ի  
բաց տարածեալք, այլ սահմանա-  
կիցք գոլով իրերաց՝ Մուսայից առ-  
հասարակ են նուիրեալ:
12. Աւոնիս կոչի Բիովտիա յանուանէ  
Աւոնի որդւոյ Պիսիդոնի. իսկ Ավո-  
նիպէտ աղբիւր է ի Բիովտիա նուիր-  
եալ Մուսայից. և յԵլիկոն լեռնէ  
հոսէ ի Պէրմէս աղբիւր:
14. Մինաւ և Լինրիւ լերինք Արկագիոյ  
նուիրականք Պանի:
18. Աւոնիս էր որդի Կիսերայ արքային  
կիսրացւոց, սիրով սիրեցեալ յԱսո-  
ղոկանէ: Սա յիդալիսն լերին Կի-  
պրոսի յորսս կորեաւ, Հարեալ ի ժա-  
նեաց վարագու. ընդ որ ելաց ողբովք  
Աստղիկն: Արդ զատ յիշատակէ քեր-  
թողս ի սփոփումն Գալլոսի, զի և ոչ  
դիցուհին բարեբախտ ի սէր իւր գը-  
տաւ:

25. Յահարին կամ Սիլուանոս շահապետ  
անտառաց :
55. Արկադացիք ուստ ի ծաղէ . դ . 50 :
55. Անապաշտութեամբ երկնչելին հե-  
թանոսք՝ ընկճել դիմականց ընդ բե-  
ռամբ հողոյ . վասն որոյ մանրամաղ  
ածէին զայն զնոքօք՝ ասելով . Թե-  
թեասցիք քեզ հողու :
47. Միտք տողից է . զի եթէ դու կա-  
մէիր , երկորեան իսկ գոհք և անվը-  
տանդս կարեաք կեալ ի միասին . այլ  
արդ վասն խստարատութեան քո եր-  
կոքին ևս թշուառ գտանիմք : Զի ես  
առ յուսահատութեան դիմագրա-  
ւեմ վտանգաց պատերազմի . իսկ գու-  
օտարին սիրով տառապեալ ի դժոն-  
դակ գաւառու ի սառամանիս ձմերայ-  
նոյ ընդ առապարս գնաս :
49. Ալուանիք բարձրաբերձ լերինք՝ որ դի-  
տալիս բաժանեն ի Գաղղիոյ և ի  
Գերմանիոյ : Հունոս գետ Եւրոպայ ,  
մեծագոյն յետ Գանուը գետոյ . բըլ-  
իսէ յԱլպեան լերանց , և ընդ բա-  
զում ընդանս հոսէ յՈվկիանոս :
52. Քալիք քաղաք յԵւրիա կղզւոց , որ  
երբեմ կից ի ցամաք երկիր Բիով-  
տիոյ կարծի լեալ , և ապա եւրիպեան  
կրծիւն անջրապետեալ : Անտի էր Եւ-  
փորինն մեծին Անտիոքոսի արքային  
Ասորուց սիրելի , և մատենադարանի  
նորին վերակացու , բանաստեղծ ա-  
նուանի , զորոյ զտաղս ինչ ի լատին  
բարբառ փոխեաց Գալլոս :

55. Սէկուլարն հաւաքանին այսինքն Թէոլո-  
րիտեայ սիկիլիացի քերթողին :
54. Ընորելի համարի զայս ամենայն ,  
քան ի խնդիր լինել Լիկորեայ այնու-  
հետեւ :
59. Պարնինիոս լեառն յԱրկադիա , ուր  
օրիորդք յորսա շահատակէին :
61. Պարնին և լինուացիք քաջազեղունք :
62. Պայտ և Պարիիք յաւերգհարսունք  
անտառաց :
67. Եբռոս գետ մէծ Թրակիոյ , երբեմ  
ոսկեբեր . որ բղլուէ ի Հռոդոպեայ  
լեռնէ և անկանի յեզեան ծավ :
68. Ալբանիա մասն Թրակիոյ ցուրտ և  
ձիւնապատ :
69. Եթովիտ գաւառ մէծ յԱփրիկէ սահ-  
մանակից Եգիպտոսի ընդ այրեցած  
գոտով , յաստեղատանէն խեցգետ-  
ոյ ի հասարակած կոյս տարածեալ :
78. Ծանր ասէ հագներգուաց զհովանի  
ծառոց , մանաւանդ զգիհւոյ . այլ  
պարտ է իմանալ զընդերկար բազմե-  
լոց հագներգուաց ընդ հովանեաւ .  
վասն որոյ ոմանք փոխանակ հանգ-  
ներգուաց սանտանիս յամեցողաց սունտանիս





«Ազգային գրադարան



NL0116947

